

ISSN 1829-1155

Համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԽԱՅԱՎՈՅՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խորագրական
խորհուրդ

Գոտիկ Կապություններ
Գանձ Սպահական
Վերոյան Տոմսաթերապան
Հայերի Պարտական
Առշան Տակորդան

Խորագրության համար
Երևան, Բաղրամյան 10
(Հեռ. համար՝ 58-81-71)

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՀ ԱՆՌԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

1(71)
2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

* ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ, ԹԵՇԻՐԱՎՈՒՄՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ և ՊԵՏՐՈՎԱՅՐ	5
* ԵԿՈԼՈԳԻԿԱԿԱՆ ԱՆՎԱՐՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵԿՈԼՈԳԻԿԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՄՔԻ ԱՐԺԵՎԱՍԱԿԱՐԳՈՒՄ Կ. ՀԱԿՈԲՅԱՆ	13

II. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1106-1119)

* ՍԴՈ-1106. «Նոհանակագիր» ՍՊԸ-ի Դիմումի Հիմքում վրա «ՀԱՐԿԵՐԻ ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 30.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 18-ՐԴ ԵՎ 19-ՐԴ ՍԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԻԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	23
* ՍԴՈ-1107. 2012 ԹՎԱԿԱՆ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ՃԵԿԱԲՈՒՄ ՍՈՒՐԱԳՐՎԱԾ «ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԻԶԳՐԱՄԱՆԱՅԻՆ ԲԱԺՄԱՆՈՒՅՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՍԱՍԻՆ» 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ (ԿիՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԻԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	35
* ՍԴՈ-1108. 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԲԲՅՈՒՆԵԼՈՒՄ ՍՈՒՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՄՑ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՏ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԳՈՐԾԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	38
* ՍԴՈ-1109. 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՄՈԽՎԱՅՈՒՄ ՍՈՒՐԱԳՐՎԱԾ «ՀԱՎԱԲԱԿԱՆ ԱՎՎԱԾՎՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՍԱՆԳԻՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՂՏՏԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐ ԱՊԱՀՈՎԱՆ ՄԱՍԻՆ» 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՎԱՏԱՍԽԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	41
* ՍԴՈ-1110. 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԲԲՅՈՒՆԵԼՈՒՄ ՍՈՒՐԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՏՐԱՍՄԱՆ ԴՅՈՒՐԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՎԱՏԱՍԽԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	45

* ՍԴՈ-1111. 2012 թվականի դեկտեմբերի 5-ին ԱՇԳԱԲԱՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՐԺՈՒԹԱՅՑԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱԾՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՍՏԱՅՆԱԳՐՈՒՄ (Կի՞ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 48
* ՍԴՈ-1112. 2012 թվականի դեկտեմբերի 5-ին ԱՇԳԱԲԱՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՏԱԿՈԴՅՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՅՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 51
* ՍԴՈ-1113. 2013 թվականի Ապրիլի 19-ին ԲԲՅՈՒՆԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՓԱՆՑ ԹՈՒՅԵԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ /ՈԵԱԴԻՍԻԱՅՅԻ/ ՍԱՍԻՆ ՀԱՍՏԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 54
* ՍԴՈ-1114. «ՀԵԼՍԻՒԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՍՍԱԲԵԱՅԻ ՎԱՆԱՋՈՐԻ ԳՐԱՄԵՅՅԱԿ» ՀԿ-ի ԴԻՄՈՒՄԻ ՀԽՄԱՆ ՎՐԴ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՍԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 60
* ՍԴՈ-1115. «ՔՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՄԿ» ՓԲԲ-ի ԴԻՄՈՒՄԻ ՀԽՄԱՆ ՎՐԱ «ԴԱՏԱՎԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 24-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 81
* ՍԴՈ-1116. 2008 թվականի Նոյեմբերի 14-ին ՔԻԾՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀՐԱԶԵՆԻ, Ո-ԱԶՄԱՍՄԵՐՔԻ, ՊԱՅՅՈՒԹԵԿԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՅՅՈՒԹԵԿԻ ՍԱՐՔԵՐԻ ԱՆՈՐԻՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԱՄ ԵՎ ԾՐՁԱՍԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՅԱՐՈՒՄ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍԻ ՀԱՍՏԱՅՆԱԳՐՈՒՄ (Կի՞ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 93
* ՍԴՈ-1117. 2013 թվականի ՍԱՅԻՆ 2-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԿՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ-ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 99
* ՍԴՈ-1118. 2013 թվականի ՀՈՒԼԻՍԻ 19-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ՝ «ԵՐԵՎԱՆԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎԱՆ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱԽԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 105

* ԱԳՈ-1119. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՍԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 73-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ
ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 111

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

* ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՍԱՄԿԸ ՊԵՏԵՐԲՈՒԹԳՈՒՄ 124
* ԱՌԱՋԻԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ 126
* ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ 128



Արևիկ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ
Իրավաբանական գիլուրյունների քեկնածու,
դոցենտ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ,
ԹԵ՞ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Իրավական պետության անանցողիկ և հիմնարար սկզբունքներից է իրավունքի գերակայության սկզբունքը: Վերջինս նախնառաջ ենթադրում է, որ պետությունը մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները ճանաչում է որպես բարձրագույն արժեքներ, ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան, սահմանափակված է այդ իրավունքներով և ազատություններով որպես անմիջականորեն գործող իրավունք:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների շարքում, անշուշտ, իրենց առանձնահատուկ տեղն ունեն դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքները: Եվ, բնականաբար, այս իրավունքներից բխում են պետության համապատասխան պարտականությունները, մասնավորապես՝ վերականգնել խախտված իրավունքը համապատասխան ընթացակարգերի (քրեական, քաղաքացիական, վարչական, սահմանադրական դատավարությունների) միջոցով: Պետության հիշյալ պարտականությունը ներառում է նաև, կոնկրետ դատավարական ընթացակարգերի առանձնահատկությունների հաշվառմամբ, այնպիսի կանոնակարգումներ, որոնք ապահովում են դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրա-

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

վունքների լիարժեք և արդյունավետ իրացումը: Ինչպիսի՞ն է իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության, վարչական դատավարության օրենսգրքերի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի կանոնակարգումներն ապահովո՞ւմ են, արդյոք, հիշատակված իրավունքների լիարժեք և արդյունավետ իրացումը: Հարցադրման պատասխանը տրվում է թե իրավաստեղծ, թե իրավակիրառ, թե իրավապաշտպան գործունեության պատասխանառության կողմից, ովքեր օգտվում են դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքից: Կարծում ենք, պատասխանի օբյեկտիվությանը կնպաստի նաև իիշյալ օրենքների դրույթների վերաբերյալ սահմանադրական դատարանի կայացրած որոշումների ուսումնասիրությունները:

Հարկ ենք համարում ընդգծել, որ սահմանադրական դատարանում ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով առավելապես վիճարկվել և քննության առարկա են դարձել հենց ՀՀ քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերի համապատասխան դրույթները¹: Այսպես՝

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69 դրույթների վերաբերյալ սահմանադրական դատարանի 33 որոշումներով 19 դրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, 13 դրույթներ՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրափական կոնկրետ բովանդակությամբ, 32 դրույթներ՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, 6 դրույթների մասով կայացվել են գործի վարույթը կարծելու որոշումներ.
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54 դրույթների վերաբերյալ սահմանադրական դատարանի 26 որոշումներով 16 դրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, 8 դրույթներ՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված

¹ Տես, մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական համացանցի էջում (www.concourt.am) հրապարակված «ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների ուսումնասիրման ողբեցույցը»: Վիճակագրական տվյալները ներկայացված են 2014 թվականի մարտի 1-ը ներառյալ:

սահմանադրախրավական կոնկրետ բովանդակությամբ, 18 դրույթներ՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, 15 դրույթների մասով կայացվել են գործի վարույթը կարճելու որոշումներ.

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20 դրույթների վերաբերյալ սահմանադրական դատարանի 13 որոշումներով 5 դրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, 4 դրույթներ՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրախրավական կոնկրետ բովանդակությամբ, 7 դրույթներ՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, 3 դրույթների մասով կայացվել են գործի վարույթը կարճելու որոշումներ:

Ինչ վերաբերում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի դրույթներին, ապա 5 դրույթների վերաբերյալ սահմանադրական դատարանի 3 որոշումներով 2 դրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, 1 դրույթ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սահմանադրախրավական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրախրավական կոնկրետ բովանդակությամբ, 1 դրույթ՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, իսկ 1 դրույթի մասով կայացվել է գործի վարույթը կարճելու որոշում:

Ստորև կոնկրետ օրինակով անդրադառնանք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ընդունված՝ 28.11.2007թ.) առանձնահատկություն բնութագրվող կանոնակարգումներից մեկի վերաբերյալ սահմանադրական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի ՍԴՈ-1127 որոշմանը և դրանում արտահայտված մի շարք իրավական դիրքորոշումներին²:

Օրենսդիրը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում (ընդունված՝ 28.11.2007թ.) ամրագրելով հայցադիմումին ներկայացվող պահանջները և դրան կցվող փաստաթթերի կոնկրետ շրջանակը, հայցադիմումին ներկայացվող պահանջների պահպանման հանգամքով է պայմանավորել հայցադիմումը վարույթ լուրումնելը։ Հակառակ դեպքում, օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով հայցադիմումը վերադարձվում կամ դրա ընդունումը մերժվում է։ Հայցադիմումին

² ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Քաղաքացի Էդուարդ Խաչիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» ՍԴՈ-1127 որոշումը տես ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական համացանցի էջում (www.concourt.am):

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Կցվող փաստաթղթերի շարքում օրենսդիրն ամրագրել է նաև հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (Եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան, ստանալը հավաստող փաստաթղթերը (73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ): Այսինքն, օրենսդիրը հայցվորի վրա դրել է հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ու գործին մասնակցող այլ անձանց և ուղարկելու, և դրանց ստանալը հավաստելու պարտականություն: Հարկ է նշել, որ ՀՀ-ում հիշյալ կանոնակարգումը, որպես դատավարական առանձնահատկություն, բնորոշ է միայն վարչական դատավարությանը: Քաղաքացիական դատավարությունում, մասնավորապես, հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ուղարկելու պարտականությունը դրված է դատարանի վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «ստանալը հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու դրույթը վիճարկելով սահմանադրական դատարանում՝ դիմողը գտել է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին, քանի որ սահմանափակում է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, նրան զրկում դատական պաշտպանության և իրավարակային քննության իրավունքից: Ըստ պատասխանողի՝ օրենսդիր մարմնի բացատրության, հիշյալ դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը և այդ իրավակարգավորման նպատակն է ապահովել դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը, կողմերի իրավահավաքարությունը, դատական նիստում գործի լիարժեք և արդյունավետ քննությունն ու լուծումը:

Բարձրացված սահմանադրահրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել բացահայտել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ամրագրված՝ «ստանալը հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի նշանակությունը՝ ՀՀ Սահմանադրության, մասնավորապես, 18-րդ հոդվածով սահմանված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի նատչելիության իրավունքների լիարժեք իրացումն ապահովելու համատեքստում:

Ի դեպք, հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին՝ առաջնորդվելով ՀՀ Սահ-

մանադրությամբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, հաշվի առնելով նաև միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Քննվող գործով ևս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել վկայակոչել դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «... պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վճաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաշափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000):

Կարևորելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորող նորմատիվ իրավական անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն ու զարգացումը, զմահատելով վիճարկվող իրավակարգավորման ազդեցությունը դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների, ինչպես նաև դրանց արդյունավետ իրականացման երաշխիքների վրա, սահմանադրական դատարանը գտել է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, ինաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: Հիշյալ համատեքստում, սահմանադրական դատարանը գտել է, որ հայցադիմումի ձևի և բովանդակության պահանջներ սահմանելու իրավակարգավորման նպատակը հայցադիմումի ձևի և բովանդակության օբյեկտիվ կազմակերպման անհրաժեշտ երաշխիքներ սահմանելը, նաև հայցադիմումը վարույթ ընդունելու ժամանակ վերացման ենթակա հետագա հնարավոր խոչընդոտները կանխարգելելը: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց, օրենսգրքով սահ-

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

մանված կարգով, ուղարկելն իրավաչափի է, քանի որ նպատակառող-ված է վարչական դատավարության մյուս կողմի դատավարական իրա-վունքների և պարտականությունների պատշաճ կատարման երաշխա-վորմանը: Առավել ևս, եթե ամրագրված են գործի դատաքննության նա-խապատրաստման շրջանակներում, դատավարական փաստաթղթե-րին ծանոթանալու բավարար այլ երաշխիքներ ևս:

Սահմանադրական դատարանը գտել է, որ վիճարկվող դրույթով «ստանալը հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջ սահ-մանելն ավելորդ ծանրաբեռնում է հայցվորի դատավարական պարտա-կանությունների շրջանակը (քանի որ հայցվորից, ըստ էության, պա-հանջվում է ապացույց առ այն, որ, մասնավորապես, փոստային կա-պի ազգային օպերատորը պատշաճ կատարել է օրենքով իր վրա դրված պարտականությունը), իրավաչափ նպատակ չի հետապնդում, արդյունքում՝ դժվար հասանելի է դարձնում դատարանի մատչելիու-թյան իրավունքը, ստեղծում է անձի դատական պաշտպանության արդ-յունավետ միջոցների սահմանադրական իրավունքի լիարժեք իրաց-ման վտանգ:

Հատկանշական է, որ սահմանադրական դատարանը վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հանգել է նաև հիմք ընդունելով վիճարկ-վող դրույթի հետ կապված իրավակիրառական պրակտիկան, համա-ձայն որի՝ ՀՀ վարչական դատարանի կողմից 2012 թվականից մինչև 2013 թվականի նոյեմբեր ամիսը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը հայցվոր-ների կողմից սահմանված կարգով չպահպանելու հիմքով հայցադիմում-ները վերադարձնելու 208 դեպքից միայն 103 դեպքում է այն կրկին ներկայացվել վարչական դատարան, որոնցից 94-ն ընդունվել է վա-րույթ, 9-ի ընդունումը մերժվել է: Այսինքն, կեսից ավելի 105-ի դեպքում վիճարկվող դրույթի հիմքով անձինք չեն կարողացել իրացնել դատա-կան պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրենց իրավունքը:

Ամփոփելով՝ սահմանադրական դատարանը գտել է, որ գործի շրջանակներում դատարանի մատչելիության և դատական պաշտպա-նության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքների և վարչական դատավարությունում կողմերի հավասար հնարավորություն-ների իրացումը կարող է երաշխավորված լինել հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (Եթե դրանք հնարավոր է պատճենահա-նել) պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց, ՀՀ վարչա-

կան դատավարության օրենսգրքով սահմանված պատշաճ կարգով ուղարկելու պահանջի կատարմամբ, ինչպես նաև գործի քննության ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու օրենսդրական համարժեք երաշխիքների իրացմամբ: Իսկ այդ պահանջի և երաշխիքների հստակ և համակարգված կանոնակարգումը, ենելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացումն ապահովելու անհրաժեշտությունից, օրենսդիր մարմնի պարտականությունն է:

Արդյունքում՝ սահմանադրական դատարանը որոշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ «ստանալը հավասող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր: Բայց և հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կհանգեցնի այնպիսի հետևանքների, որոնք կխսաբարեն այդ պահին տվյալ նորմի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաև նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված պատշաճ կարգով ուղարկելու պահանջի և գործի քննության ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու իրավական համարժեք երաշխիքների հստակ և համակարգված օրենսդրական կանոնակարգում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2014 թվականի հուլիսի 1-ը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ 2007 թվականի նոյեմբերի 28-ի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին ուժը կորցրած է ճանաչվել 2013 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, սակայն խնդրո առարկա հարցին նոր օրենսգրքով ևս տվել է նույն իրավակարգավորումը: Ուստիև, հիմք ընդունելով սահմանադրական դատարանի ՍԴ-1127 որոշումը և դրանում արտահայտված իրավական դիրքորոշումները, անհրաժեշտ է ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ: Հաշվի առնելով դատավարական առանձնահատկությունները՝ օրենսդիրը կարող է որոշել հայցա-

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

դիմումը և կից փաստաթղթերի պատճեններն ուղարկելու պարտավորությունը շարունակել վերապահել հայցվորին, թե՝, այնուամենայնիվ, այն վերապահել դատարանին, բայց կարևորը, իհարկե, հետևյալն է. որևէ դատավարական առանձնահատկություն չի կարող և չպետք է սահմանափակի դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքներն ու դրանց լիարժեք ու արդյունավետ իրացումը:

Կարինե ՀԱԿՈԲՅԱՆ

Միջազգային իրավունքի հայկական
ասոցիացիայի գործադիր դնօրեն

**ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ
ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԱՐԺԵՎԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Այսօր էկոլոգիապես անվտանգ շրջակա միջավայրում յուրաքանչյուր մարդու ապրելու իրավունքը ոչ միայն կենսաբանական անհրաժեշտություն է, այլև պետությունների սոցիալական և տնտեսական կայուն զարգացման կարևոր նախադրյալ։ Ավելին, կարծում ենք, ժամանակն է, որպեսզի շրջակա միջավայրի իրավական պաշտպանության գիտակցումը փոխակերպվի համամարդկային իրամայականի և պետությունների միջազգային ընտանիքի կողմից այն ճանաչվի որպես *jus cogens* սկզբունք, քանզի որևէ կերպ հնարավոր չէ հիմնավորել, որ կյանքի և առողջության համար անվտանգ բնական միջավայրը մարդու և ժողովուրդների համար ավելի նվազ կարևորություն ունի, քան, ասենք, պետությունների ներքին գործերին չմիջամտելու, միջազգային պայմանագրերը բարեխող կատարելու և/կամ միջազգային իրավունքի մյուս համապարտադիր սկզբունքները։

Պետությունների կողմից մարդու կյանքի իրավունքի ընդհանուր պաշտպանությունը, վերջին հաշվով, խիստ ձևական բնույթ կարող է ձեռք բերել, եթե պետությունների միջազգային ընտանիքը իրական քայլեր չձեռնարկի կյանքի իրավունքի կենսաբանական երաշխիքների, այդ թվում առողջ շրջակա միջավայրում նրա ապրելու հնարավորությունը ապահովելու համար։

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Ժամանակակից էկոլոգիական-ճգնաժամային զարգացման պայմաններում «անվտանգություն» եզրույթը, բովանդակային ընդլայնման առումով, ենթարկվել է որոշակի էվոլյուցիայի, ինչի հետևանքով «պետության անվտագության ապահովում» հասկացությունը վաղուց ի վեր դուրս է եկել զուտ ռազմական և քաղաքական անվտանգության ապահովման սահմաններից:

Ներկայումս տիրապետող կարծիք է, որ էկոլոգիական անվտանգությունը հանդիսանում է ոչ միայն ազգային, այլև միջազգային անվտանգության անբաժան բաղկացուցիչը: Նշված հանգամանքը հիմք է պնդելու, որ էկոլոգիական անվտանգությունը կայուն զարգացման պարտադիր նախապայման է և բնական համակարգերի պահպանության ու շրջակա միջավայրի համապատասխան որակի ապահովման անբաժան հիմքն է: Իսկ էկոլոգիական խնդիրների արդյունավետ լուծման և էկոլոգիական ճգնաժամերի հաղթահարման համար կարևոր գործիք է ցանկացած պետության սոցիալ-տնտեսական համակարգի էկոլոգիացումը: Դրանք միևնույն մեղալի երկու երեսներն են: Միայն հասարակության և բնության նման «ազնիվ դաշինքը» կարող է ապահովել պետությունների տնտեսական բարգավաճումը, ինչը, իր հերթին, լրջորեն կխթանի անվտանգ էկոլոգիական միջավայրի ներկայությունը:

Էկոլոգիական անվտանգությունը շրջակա միջավայրի, բնակչության, տարածքների, տնտեսական և այլ օբյեկտների պաշտպանվածության վիճակն է այն տարաբնույթ վտանգներից, որոնք առաջանում են շրջակա միջավայրի բաղադրիչների բացասական փոփոխություններից՝ մարդկային (անտրոպոգեն) գործունեության, բնական երևույթների և հակահրավական գործողությունների արդյունքում: Այն ապահովում է իրավական, կազմակերպչական, ֆինանսական, նյութական և տեղեկատվական միջոցների համալիրով, որոնք նախատեսված են անվտանգության իրական և հավանական վտանգների կանխատեսման, կանխարգելման, վերացման, ինչպես նաև հետևանքների մեղմացման համար¹:

Էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրության կարևորությամբ պայմանավորված՝ այն ներկայումս դիտարկվում է որպես միջդիսցիպլինար իրավական ինստիտուտ, որը իր մեջ ներառում է էկոլոգիական և բնառեսուրսային իրավունքի նորմեր, ինչպես նաև տեխնիկական, տեխնոլոգիական, արդյունարերական, շինարարական

¹Տե՛ս Դյուբովիկ Օ.Լ., Экологическое право в вопросах и ответах, Учебное пособие, 3-е издание, перераб. и допол., М.: Проспект, 2013, стр. 252:

կանոնակարգեր, նորմատիվներ, չափորոշիչներ (ստանդարտներ) և պահանջներ²: Հարկ է նշել, որ էկոլոգիական անվտանգությունը, բացի ազգային անվտանգության առաջնահերթ բաղկացուցիչ մաս լինելուց, նաև դեպի կայուն զարգացում անցում կատարելու գործիք է, ինչպես նաև սոցիալական զարգացման առաջնահերթ պայման³:

Ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով կարևոր նշանակություն ունի «Էկոլոգիական անվտանգություն» հասկացության բնորոշումը: Այս հարցում գոյություն ունեն տարաբնույթ մոտեցումներ, սակայն, մեր կարծիքով, դրա առավել ամբողջական և հիմնավոր սահմանումը տվել է էկոլոգիական իրավունքի ականավոր մասնագետ Մ.Մ. Բրինչուկը: Ըստ վերջինիս՝ էկոլոգիական անվտանգությունը շրջակա միջավայրի պահպանության այն հիմնական սկզբունքն է, ինչը պահանջում է, որ շրջակա միջավայրի վրա վնասակար կերպով ներազդող ցանկացած գործունեություն, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված և պրակտիկայում իրականացվող իրավական և այլ բնապահպանական միջոցները պետք է գնահատվեն էկոլոգիական անվտանգության դիրքերից⁴:

Մ. Մ. Բրինչուկն էկոլոգիական անվտանգության ապահովումը դիտարկում է նաև որպես գործունեության կարևորագույն հեռանկարային նպատակ և խնդիր՝ ուղղված շրջակա միջավայրի բարենպաստ վիճակին՝ նախ և առաջ դրա չաղուտվածության և ռեսուրսատարողունակության, վերականգնման ու պահպանության տեսանկյունից: Ըստ նրա՝ այն կարող է նաև ծառայել որպես շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման մասով իրավական նորմերի արդյունավետության գնահատման իրավական չափորոշիչ: Այդ նորմերի պահպանությունն էկոլոգիական անվտանգության ապահովման ցուցանիշն է: Եվ, ընդհակառակը, խախտումը՝ էկոլոգիական վտանգավորության ստեղծման ցուցանիշն է⁵:

Հարկ է ընդգծել, որ էկոլոգիական անվտանգության ապահովումը՝ իրեն սկզբունք, իրացվում է հիմնականում բնության պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման այնպիսի իրավական նորմերի մի-

² Белокрылова Е.А., Правовое обеспечение экологической безопасности: учебное пособие, Ростов н/Д; Феникс, 2013, стр. 11.

³ Копылов М.Н., Введение в международное экологическое право: Учебное пособие. М.: РУДН, 2007, стр. 227.

⁴ Տե՛ս Обеспечение экологической безопасности как правовая категория, Бринчук М.М., Государство и право, 2008, №9, стр. 30-42:

⁵ Տե՛ս նոյն տեղում:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

շոցով, ինչպիսիք են նորմավորումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը, էկոլոգիական փորձաքննությունը, էկոլոգիական հավաստագրումը և այլն:

Գիտական գրականության մեջ ծավալվել է բավական հետաքրքիր երկխոսություն՝ նվիրված «էկոլոգիական անվտանգության ապահովում» և «շրջակա միջավայրի պահպանություն» հասկացություններին: Դեռևս խորհրդային ժամանակների գիտնական-հետազոտողները «շրջակա միջավայրի պահպանություն» հասկացություն ասելով նկատի են ունեցել օրենքով սահմանված միջոցառումների համակարգ, որն ուղղված է բնության պահպանության կազմակերպմանը և ռացիոնալ օգտագործմանը, որա ռեսուրսների վերականգնմանը և բազմացմանը⁶: Անցյալ դարի 70-ական թվականներին տրվող սահմանումներում հանդիպում ենք նաև կայուն օրգագուման հայեցակարգի որոշ տարրերի: Մասնավորապես, պահանջվում էր, որպեսզի **ապագաս սերունդներին հողի փոխանցումը կարպարվի առավել բարելաված վիճակում:** Խորհրդային ժամանակաշրջանի գիտնականները շրջակա միջավայրի պահպանության հարցում ունեին բավական առաջադիմական մուտքեցում: Նրանց կողմից պաշտպանվող միջսերնդային հավասարության (intergeneration equity) սկզբունքը համաշխարհային իրավական կարգավորումներում տեղ գտավ 80-90-ական թվականներին:

Մեկ այլ խումբ գիտնականների կարծիքով շրջակա միջավայրի պահպանության էությունը կայանում է Երկրի վրա մարդկանց կյանքի համար անհրաժեշտ պայմանների պահպանության, վերանականգնման, բարենպաստ բնական միջավայրի բարեկարգման խնդրում: Սի խումբ էլ առանձնացրել է նաև մարդու գործունեության արդյունքում առողջության վրա բացասական ազդեցության կանխարգելման դրույթը⁷: Պեսք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նախ՝ դրկտրինալ սահմանումներում շրջակա միջավայրի պահպանության տարրերից է ոչ միայն պահպանությունը, այլև բնական միջավայրի վերականգնումը: Եվ երկրորդ՝ շրջակա միջավայրի պահպանությունը նե-

⁶ Տե՛ս Կազанцев Հ.Պ., Колотинская Е.Н., Правовая охрана природы в СССР. Учебное пособие. М., 1962. С 16: Մեջքերումն լսու Ս. Ս. Բրինչովի Обеспечение экологической безопасности как правовая категория, Государство и право, 2008, №9, стр. 30-42:

⁷ Տե՛ս Социализм и охрана окружающей среды Колбасов О.С., М., 1979. С.11 Են Էкология и право, Петров В.В., М., 1981. С 199. Մեջքերումն լսու՝ Բրինչով Մ.Մ. Обеспечение экологической безопасности как правовая категория, Государство и право, 2008, №9, стр. 30-42:

բառում է նաև շրջակա միջավայրի վրա տնտեսական կամ այլ գործունեության բացասական ազդեցության հետևանքների վերացման միջնառումները:

Ինչ վերաբերում է «Էկոլոգիական անվտանգության ապահովում» հասկացությանը, ապա դրա ամբողջական սահմանումն ունի որոշակի առանձնահատկություն: Այն բնորոշովում է որպես էկոլոգիական գործունեության ձև, որի բովանդակությունն է կազմում այնպիսի շրջակա բնական միջավայրի որակի ձեռքբերումը և պահպանումը, որի պայմաններում դրա գործուների ազդեցությունը ապահովում են մարդու առողջությունը և նրա բեղմնավոր գործունեությունը՝ բնության հետ ներդաշնակության մեջ, իսկ գործնական իմաստով՝ շրջակա միջավայրի անբարենպաստ գործուների ազդեցությունը, էկոլոգիական վրաբերը հնարավորինս նվազագույն մակարդակի հասցնել⁸:

Գրականության մեջ «Էկոլոգիական անվտանգության ապահովում» եզրույթը բնորոշվում է նաև իրքն գործողությունների մի համալիր, որը ներառում է միջոցների հանրագումար, որտեղ շրջակա միջավայրի պահպանությունը հանդիսանում է պարզապես դրանցից մեկը: Ըստ այս մոտեցման՝ էկոլոգիական անվտանգության ապահովումը կարելի է անվանել էկոլոգիական միջոց, որը չի կարող մերժել այլ՝ քաղաքական, իրավական միջոցների գոյությունը⁹:

Զարգացման ժամանակակից որդեգրված վեկտորի՝ կայուն զարգացման հայեցակարգի հետ անխօնելիորեն կապված է էկոլոգիական անվտանգության հասկացությունը: Սույն հետազոտության շրջանակում փորձ է արվում էկոլոգիական անվտանգության խնդրին մոտենալ կայուն զարգացման հայեցակարգի տեսանկյունից:

Ինչպես արդեն նշվեց, կայուն զարգացման իրավունքի բովանդակությունը և նպատակն այսօր անհրաժեշտ է դիտարկել էկոլոգիական անվտանգության իմպերատիվի համատեքստում:

Շրջակա միջավայրի պահպանությունը, էկոլոգիական անվտանգության ապահովումը մարդկային հասարակության զարգացման իրավունքի իրականացման ոչ միայն անքակտելի էկոլոգիական բաղկացու-

⁸ Տե՛ս Охрана окружающей природной среды, обеспечение экологической безопасности, обеспечение рационального использования природных ресурсов: термины, содержание, соотношение, Голиченков А.К., Экологическое право России, Сборник материалов научно-практических конференций, 1995-1998гг. М., 1999, С 42. Մեջբերումն լսո՞ւ Ս. Ս. Բրինչուկի Օбеспечение экологической безопасности как правовая категория, Государство и право, 2008, №9, стр. 30-42:

⁹ Копылов М.Н. Նույն տեղում, էջ 25:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ցիսն են, այլև հանդիսանում են դրա առաջնահերթ տարրը: Ասվածը հիմնավորելու համար տեղին է մեջքերել ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Աննանի՝ «Էլ ավելի ազատության պայմաններում. դեպի բոլորի համար զարգացում, անվտանգություն և մարդու իրավունքներ» վերտառությամբ հանրահայտ զեկույցից մի հատված: Ինչպես նա է նշում. «Էլ ավելի շատ ազատության գաղափարն իր մեջ ամփոփում է պատկերացումն այն մասին, որ զարգացումը, անվտանգությունը և մարդու իրավունքները հանդիսանում են միմյանց անբաժան մասերը: Մենք չենք կարող ապահովել զարգացում՝ չապահովելով անվտանգությունը, և հետևաբար չենք կարող ապահովել անվտանգություն, առանց ապահովելու զարգացում, իսկ այդ երկու երևույթները չեն կարող ապահովել առանց ապահովելու մարդու իրավունքների երաշխավորում¹⁰»:

Եկողոգիական խնդիրների՝ անվտանգության հարբությունից դիտարկումը նշանակում է դրանց շնորհել բարձրագույն միջազգային առաջնահերթությունների կարգավիճակ: Այսօր ձևավորվել է «միջազգային անվտանգություն» հասկացության արդեն դասագրքային դարձած սահմանումը, համաձայն որի՝ միջազգային անվտանգությունն այնպիսի աշխարհակարգ է, որում պետությունների և միջազգային իրավունքի մյուս սուբյեկտների համար ստեղծվում են ազատ զարգացման համար բարենպաստ պայմաններ:

Լայն իմաստով միջազգային անվտանգությունը ներառում է քաղաքական, տնտեսական, հումանիտար, տեղեկատվական, էկողոգիական և այլ ոլորտների անվտանգության համալիր տեսակետները¹¹: Իսկ նեղ իմաստով այն պետք է դիտարկել որպես անհատի, նրա իրավունքների, ազատությունների և շահերի անվտանգություն, որի ապահովման միջոցները պայմանավորված են անհատական անվտանգության սահմանադրական երաշխիքներով, նրա կյանքի որակի և մակարդակի բարձրացման հանգանանքով, մարդու և քաղաքացու ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացմամբ:

Եկողոգիական խնդիրներին միջազգային անվտանգության դիրքերից մոտենալու ընթացքում անհրաժեշտ է նաև նշել, որ մարդու՝ առողջ բնական միջավայրում ապրելու իրավունքը հավասարապես կախվա-

¹⁰ In Larger Freedom: Towards Development, Security And Human Rights For All, Report Of The Secretary-General, <http://www.un.org/largerfreedom/contents.htm>

¹¹ Международное публичное право: учебн. /Л.П. Ануфриева, К.А. Бекяшев, Е.Г. Моисеев, В.В. Устинов [и др.]; отв. Ред. К.А. Бекяшев.-5-е изд., перераб. И до.-М.: Проспект, 2009, стр. 485.

ծության մեջ է գտնվում իր երկրի սոցիալ-տնտեսական, խսկ այժմ կարող ենք ավելացնել՝ նաև անվտանգ, խաղաղ պայմաններում գոյացնելու հնարավորությունից:

Հարկ է նշել, որ էկոլոգիական անվտանգության սկզբունքն այն հիմնական ուղղակի կապն է, որ գոյություն ունի շրջակա միջավայրի պահպանությանը և բարելավումը, բոլոր բնական ռեսուրսների ուսցիունալ օգտագործումը սերտ կապվածության մեջ են գտնվում միջազգային անվտանգության բոլոր տեսակետների ապահովման հետ, այդ թվում՝ նաև զինաքաղաքան հետ¹²: Մասնավորապես, 1976թ. դեկտեմբերի 10-ի «Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ուսումնական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին» կոնվենցիան¹³, որն առաջին միջազգային փաստաթուղթն է՝ ուղղված շրջակա միջավայրի վրա ազդեցության արգելմանը ուսումնական կամ այլ նպատակներով: Համաձայն 1-ին հոդվածի՝ Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է ձեռնպահ մնալ լայնածավալ, երկարատև կամ ծանր ազդեցություն գործող՝ շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ուսումնական կամ այլ կարգի թշնամական օգտագործումից՝ որպես ավերման կամ մասնակից ցանկացած այլ պետության վճառ պատճառելու միջոց: Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է չաղակցել, չիրախուսել, չդրդել որևէ պետության, պետությունների խմբի կամ միջազգային կազմակերպության ներգրավվելու հիշատակված հոդվածի առաջին կեսի դրույթների հակասող գործողությունների մեջ: Կոնվենցիայի 2-րդ հոդվածը տալիս է «Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցներ» հասկացության սահմանումը. այն վերաբերում է ցանկացած տեխնիկայի՝ ուղղված բնական գործընթացների միտումնավոր փոփոխություններ կատարելու միջոցով Երկրի դինամիկան, կառուցվածքը կամ բաղադրությունը, ներառյալ՝ դրա կենսոլորտը, քարտլորտը, ջրոլորտը և մքնոլորտը կամ Տիեզերքը փոփոխելուն: Հնարավոր հետևանքները, որոնք կարող են առաջանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության դեպքում, թվարկված են Կոնվենցիայի

12 Международное право: Учебник. Отв. Ред. Э.А. Колосов, В.И. Кузнецов. -М.: Международные отношения, 1999. Стр. 588.

13 «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954թ. մայիսի 14-ի կոնվենցիան և դրա արձանագրությունները, «Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ուսումնական կամ այլ թշնամական օգտագործումն արգելելու մասին» 1976թ. դեկտեմբերի 10-ի կոնվենցիան, Երևան 2001, էջ 96:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

2-րդ հոդվածին առնչվող մեկնաբանություններում. որանք են՝ երկրաշարժերը, ցունամիները, տարածաշրջանում շրջակա միջավայրի հավասարակշռության խախտումը, եղանակային փոփոխությունները (ամպեր, տեղատարափ անձրևներ, տարաքնույթ ցիկլոններ ու փոթորիկներ և այլն), կլիմայական փոփոխությունները, օվկիանոսային հոսանքների փոփոխությունները, օգնային շերտի և իոնոլորտի կառուցվածքային փոփոխությունները:

Էկոլոգիական անվտանգության սկզբունքի իրավաբանական բովանդակությունը ենթադրում է յուրաքանչյուր պետության պարտավորությունը գործել այնպես, որպեսզի հավասարապես մեղմվի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունն ինչպես տեղական և ազգային տարածաշրջանում, այնպես էլ գլոբալ մակարդակներում:

Կարծում ենք, մեր այս դիտարկումը պետք է միջազգային իրավունքում ամրագրվի որպես պետությունների համար իրավաբանական նշանակության պարտադիր վարքագիծ: Իրավաբանական գրականության մեջ կա նաև այլ կարծիք, համաձայն որի՝ վերն ասվածի համատերսություն էկոլոգիական անվտանգությունն ավելի շատ պետք է ընկալել որպես նպատակ, որին ձգտում է մարդկությունը, քան զործող սկզբունք¹⁴:

Ընդունելով հանդերձ, որ, իրոք, էկոլոգիական անվտանգության երաշխավորումը մարդկության առաջնային նպատակներից է, միաժամանակ չափությունը է մոռանալ, որ «մարդկություն», կարող ենք ասել՝ նաև «քաղաքակրթություն» եզրույթներն իրավաբանական կատեգորիաներ չեն, մարդկության առջև ծառացած ցանկացած խնդիր կարող է լուծվել միայն պետությունների միջազգային ընտանիքի անդամների կողմից կոնկրետ պարտավորություններ ստանձնելու ձևով:

Էկոլոգիական անվտանգության սկզբունքի՝ որպես միջազգային էկոլոգիական իրավունքի սկզբունքներից մեկի կայացումը պայմանագրված է պետությունների ձգտմամբ՝ համապարփակ և փոխկապակցված լուծել այնպիսի բարդ հարցեր, ինչպիսիք են՝ միջազգային հանրության սոցիալ-տնտեսական զարգացման պահանջները և շրջակա միջավայրի պահպանության գլոբալ հիմնախնդիրները:

Այսօր որևէ կասկած չկա, որ պետությունները գիտակցում և շահագրգուված են արդյունավետ միջազգային զործընթացներ և մեխանիզմներ ստեղծելու միջոցով ապահովել մոլորակի ռեսուրսների՝ որպես

¹⁴ Ste'utta Brunnee, Stephen J. Toope, Environmental Security and Freshwater Resources: Ecosystem Regime Building, American Journal of International Law, January, 1997:

համամարդկային ժառանգության ռացիոնալ օգտագործումը: Ինչպես իրավացիորեն նշվում է զրականության մեջ, «քնապահպանությունը ոչ միայն զուտ բնական ռեսուրսների պահպանություն է, այլև կյանքի առանցք, որը լայն իմաստով կարելի է դիտարկել նաև որպես ազգապահպանություն»¹⁵: Մեր խորին համոզմամբ, բնության պահպանությունը յուրաքանչյուր պետության համար ունի նույնքան հույժ կարևորություն, որքան այդ երկրի սահմանների պաշտպանությունն ու ազգային անվտանգությունն են: Շրջակա միջավայրի պահպանությունը, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության հիմնական բաղկացուցիչ մասներից է:

Էկոլոգիական իրավունքի մասնագետ U.U. Արրահամյանի բնորոշմամբ՝ էկոլոգիական անվտանգությունն ունի տնտեսական բովանդակություն և, առաջին հերթին, արտահայտում է այն ծախսերը, որ անհրաժեշտ են էկոլոգիական պաշտպանվածության առավելագույն մակարդակի երաշխավորման համար: Այդ ծախսերը մշտական բնույթ չեն կրում, դրանք հստակեցվում են՝ ելնելով կոնկրետ երկրի տնտեսական զարգացման մակարդակից, հասարակության ֆինանսական, նյութական և այլ հնարավորություններից¹⁶:

Պատահական չէ, որ էկոլոգիական անվտանգության հայեցակարգի ձևավորման սկզբնական փուլում անցյալ դարի 90-ական թվականներին, արևմտյան գիտական դպրոցներն սկսեցին լրջագույնս հետաքրքրվել այս հիմնահարցով: Նրանք էկոլոգիական հիմնախնդիրները հավասար նժարի վրա էին դիտարկում անվտանգության ավանդական մոտեցումների հետ¹⁷: Նման մոտեցման անհրաժեշտությունը հավանաբար հիմնվում է մարդու և բնության փոխակապվածության երևույթի գիտակցման վրա:

Նման գիտակցության առկայության պարագայում է միայն հնարավոր ընդունել բնական օբյեկտների աղտոտման էկոլոգիական արգելքների ճանաչման անհրաժեշտությունը, այդ թվում՝ մարդու և բնության միջև փոխարարերությունների սոցիալ-տնտեսական մեխանիզմների ստեղծման պարտադիրությունը: Այստեղից էլ կարելի է բխեցնել էկոլոգիական անվտանգության էկոլոգիական տեսակետը, որը ենթադրում է

¹⁵ Кириленко В. П., Принцип экологической безопасности в современном международном праве, Правоведение. -1989. - № 3. - С. 49 – 53, <http://www.law.edu.ru/article/article.asp?articleID=177772>

¹⁶ Տե՛ս Աբրամյան Ս. Հ., Էկология глазами юриста, Ереван, изда. "Егая", 2005 թ., стр. 29:

¹⁷ "Environmental Security in the Twenty-First Century: New Momentum for the Development of International Environmental Law", Jutta Brunnee, Fordham International Law Journal, May, 1995.

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

շրջակա միջավայրի վրա բացասական մարդկային (անտրոպոգեն) ազդեցության նվազագույն քույլատրելի սահմանների ուրվագծման անհրաժեշտությունը:

Անփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ էկոլոգիական անվտանգությունը ենթադրում է միջազգային հարաբերությունների այնպիսի վիճակ, որի պայմաններում ապահովվում են շրջակա միջավայրի պահպանությունը, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, վերարտադրությունը և որակի բարելավումը։ Պետությունների և նրանց իրավասու մարմինների ցանկացած տեսակի գործունեությունը, լինի դա Համաշխարհային օվկիանոսում, Լուսնի վրա, թե՛ Տիեզերքում, պետք է իրականացվի այնպես, որպեսզի չվնասվեն ոչ միայն առանձին պետությունների, այլև համաշխարհային հանրության իրավունքները և օրինական կենսական շահերը։ Ասվածի համատեքստում պետք է փաստել, որ էկոլոգիական անվտանգության բնագավառի միջազգային պայմանագրային պարտավորություններն իրենց էությամբ և առանձնահատուկ կարևորությամբ ունեն **համամոլորակային** բնույթ։



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
30.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 18-ՐԴ ԵՎ 19-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

10 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարուրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյա-
նի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազար-
յանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),
մասնակցությամբ՝

դիմոնի ի պաշտոն ներկայացուցիչներ՝ «Նոյյան տապան» ՍՊԸ-ի
տնօրեն Ս. Դանիելյանի, փաստաբան Հ. Եզանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժո-
ղովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխա-
տակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության
բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առա-
ջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

իրավիրված՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտ-
ների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դոճաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Նոյյան տապան» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Նոյյան տապան» ՍՊԸ-ի՝ 22.04.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, լսելով ՍԴ նիստին հրավիրված՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կողմտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանի պարզաբանումները, հետազոտելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թվականի ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997 թվականի մայիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 1997 թվականի մայիսի 30-ից:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքը՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթներով, լրացվել է 2011 թվականի մայիսի 11-ին ընդունված ՀՕ-154-Ն օրենքով, որն ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից 2011 թվականի մայիսի 30-ին եւ ուժի մեջ մտել 2011 թվականի հունիսի 13-ին:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի՝ դիմողի կողմից վիճարկվող 18-րդ և 19-րդ մասերը ահմանում են՝

«Հարկ վճարողի չկատարած՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գանձման նպատակով հարկային մարմինն իրավունք ունի պարտապահնի (դերիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերելու հարկ վճարողի պահանջի իրավունքը եւ ստացված գումարներն ուղղելու հարկ վճարողի պարտավորությունների մարմանը»:

Ընդ որում, հարկային մարմնին է անցնում իրավունքի անցման պահին առկա ծավալով պարտավորության (ներառյալ՝ ապառքը եւ դրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը) պահանջի իրավունքը, իսկ պա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հանջի իրացման պահին, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տույժերի հաշվարկման ժամկետները, կատարվում է պարտավորությունների վերահաշվարկ»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մյասնիկյանի հարկային տեսչությունը (իրավահաջորդ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչություն) 30.11.2011 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Նոյյան տապան» ՍՊԸ-ի՝ 24.218.500 /քանչորս միլիոն երկու հարյուր տասնութ հազար հինգ հարյուր/ դրամ բռնագանձելու պահանջի մասին:

Վերջինս առարկել է ներկայացված հայցի դեմ այն պատճառաբանությամբ, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ մասերի համաձայն՝ հարկային մարմնի և ՍՊԸ-ի միջև 10.11.2011 թվականին և 23.01.2012 թվականին կնքվել են «Պահանջի իրավունքը զիջելու մասին» պայմանագրեր:

Համաձայն 10.11.2011 թվականին կնքված պայմանագրի՝ հարկային մարմնին է փոխանցվել «Գործարար տիեզերք» ՍՊԸ-ի հանդեպ «Նոյյան տապան» ՍՊԸ-ի ունեցած 16.000.000 /տասնվեց միլիոն/ դրամի պահանջի իրավունքը, իսկ համաձայն 23.01.2012 թվականին կնքված պայմանագրի՝ «Հեյդելբերգ» ՍՊԸ-ի հանդեպ ունեցած 4.651.875 /չորս միլիոն վեց հարյուր հիսունեկ հազար ութ հարյուր յոթանասունինգ/ դրամի պահանջի իրավունքը:

ՀՀ վարչական դատարանը բավարարել է հարկային մարմնի հայցն այն պատճառաբանությամբ, որ ցեսիայի պայմանագրերով «չի սահմանափակվել պատասխանողի 08.11.2011թ. դրությամբ հարկային պարտավորությունների բռնագանձման պահանջով դատարան դիմելու հայցվորի իրավունքը»:

ՀՀ վարչական վերաբննիչ դատարանը մերժել է ներկայացված վերաբննիչ բողոքը՝ բողնելով վարչական դատարանի վճիռն ուժի մեջ: Մեկնարաննելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը՝ ՀՀ վարչական վերաբննիչ դատարանն արձանագրել է, որ «օրենսդիրն իրավունք վերապահելով հարկային մարմնին պարտապանի (դերիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերելու հարկ վճարողի պահանջի իրավունքը, այն չի նույնաց-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նում հարկային պարտավորության կատարման հետ»: Միաժամանակ, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն արտահայտել է նաև իրավական դիրքորոշում առ այն, որ «պարտապանի (դերիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի գիշման պայմանագրով հարկ վճարողի պահանջի իրավունքը ձեռք բերելու հանգամանքը չի սահմանափակում հարկային մարմնի իրավունքը կետանցված հարկային պարտավորությունները բռնագանձելու համար հայցադիմում ներկայացնել դատարան»:

ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը, քանի որ «Օրենքը, հարկատու-հարկահավաք հարաբերություններում նախատեսելով պարտավորությունների կատարման արտադատարանական մեխանիզմ, միաժամանակ չի բացառել Ցեսիայի պայմանագրի գործողության ժամկետում Հարկային մարմնի կողմից հայցով դատարան դիմելու հնարավորությունը»:

Դիմողը նաև գտնում է, որ վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը, քանի զրկում են անձին իր սեփականության իրավունքից: Դիմողը, մասնավորապես, նշում է հետեւյալը. «Օրենքի համաձայն կնքված Ցեսիայի պայմանագրերի գործողության ընթացքում ակնհայտ է, որ Ընկերությունը զրկվել է զիշված պահանջի իրավունքը տնօրինելու հնարավորությունից: Ավելին՝ Ցեսիայի պայմանագրերի 2.8. կետերի համաձայն Ցեղենտն իրավունք ունի միակողմանի հրաժարվել սույն պայմանագրից միայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները չունենալու դեպքում: Մինչդեռ նոյն պայմանագրերի 2.7. կետի համաձայն Հարկային մարմնը իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնել պայմանագրի գործողությունը»: Դիմոդը նաև նշում է, որ՝ «Եթե ... հաշվի առնենք, որ Օրենքը անկախ Ցեսիայի պայմանագրի առկայությունից հնարավորություն է տալիս Հարկային մարմնին նոյն պարտավորության համար բռնագանձման հայց ներկայացնել, իսկ միաժամանակ Ցեսիայի պայմանագրի կնքմամբ զրկել է Ընկերությանը փոխանցված պահանջը տնօրինելու հնարավորությունից, ապա ակնհայտ է, որ տվյալ դեպքում բացակայում է «արդարացի հավասարակշռություն» հանրության ընդհանուր շահի /պետական բյուջեի և անհատի /Ընկերության/ հիմնարար իրավունքի /փոխանցված պահանջի

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նկատմամբ սեփականության իրավունքի/ միջեւ, ինչը չի բխում Սահմանադրության 3 հոդվածի պահանջներից»:

Դիմողը վկայակոչում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի կիրառման մի քանի հարցերի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 16.04.2012թ. թիվ 15 պաշտոնական պարզաբանումը, որի 1-ին մասի համաձայն՝ «... Պարտապանի (դերիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի գիշման պայմանագրով հարկ վճարողի պահանջի իրավունքի անցումը հարկային մարմնին չի դադարեցնում հարկ վճարողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով, չափերով եւ ժամկետներում տույժերի եւ տուգանքների հաշվարկումը»: Դիմողը գտնում է, որ նման կանոնակարգումը հակասում է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածին, քանի որ «Ընկերությունը կարող է պատասխանատվություն կրել միայն այդ պահին /Ցեսիայի պայմանագրերի կնքման պահին/ գոյություն ունեցող հարկային պարտավորության ժավալի եւ պայմանների շրջանակում եւ չի կարող լրացնիչ հարկային բեռ ստանձնել Հարկային մարմնին զիջված պահանջի չկատարման կետանցի համար»:

Դիմողը նաև նշում է, որ «վիճարկվող հոդվածի նորմերն առաջանում են իրավական անորոշություն եւ պայմաններ ստեղծում վիճարկվող հոդվածի կամայական եւ տարածական մեկնաբանման ու կիրառման համար, չեն բացահայտում «վերահաշվարկ», «պահանջի իրացման պահ» բառակապակցությունների բովանդակությունը, ինչն իր հերթին վտանգում է Ընկերության իրավունքների սահմանափակման սահմանադրական սկզբունքների իրացումը, հակասության մեջ է դնում այդ նորմը ՀՀ Սահմանադրության հետ՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 42 եւ 45 հոդվածները»:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ եւ 19-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 8, 18, 19, 31, 42 եւ 45-րդ հոդվածների պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանող կողմը նշում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածով նախատեսված պահանջի իրավունքի զիջման դրույթները կոչված են օժանդակելու այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնք ունեն պետական բյուջեի նկատմամբ չկատարված հարկային պարտավորություններ եւ միաժամանակ դերիտորական պարտքեր՝ դրանք հարկային մարմնի օգնությամբ եւ մի-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ջամտությամբ հարկային պարտավորությունների կատարմանն ուղղելու առումով, քանի որ հարկային մարմնի եւ հարկ վճարողի միջեւ ցեսիայի պայմանագիրը կնքվում է օրենքի հիման վրա, եւ պայմանագրի կողմը հարկային մարմնն է, որն օժանդակում է հարկ վճարողին կատարելու իր հարկային պարտավորությունները: Այսինքն, ըստ պատասխանողի, ցեսիայի պայմանագրով պահանջի իրավունքի գիշման մեխանիզմի ամրագրումն օրենսդիրը կատարել է հօգուտ հարկ վճարողի՝ նրան հնարավորություն տալով մարելու իր հարկային պարտավորությունները նույնիսկ այն ժամանակ, երբ տվյալ պահին հարկ վճարողը չունի միջոցներ, բայց ունի դերիտորական պարտքեր: Պահանջի իրավունքն իրացնելուց հետո, երբ պարտապանից ստացված գումարներն ուղղվում են հարկ վճարողի հարկային պարտավորությունների մարմանը, այդ մասով հարկ վճարողի հարկային պարտավորությունները դադարում են:

Պատասխանողը գտնում է, որ թեև հարկային հարաբերություններում բացակայում է կողմերի իրավահավասարությունը եւ այս ոլորտում կարող են գործել գրեթե ֆորմովյար (տիպապայմանագրային) իրավունքի դրույթները՝ հարաբերությունների մեջ մտնելու հարաբերական ազատությունն առանց հարաբերության պայմանների փոփոխման իրավունքի, այդուհանդերձ, պահանջի իրավունքը գիշելու պայմանագիրը կնքվում է կողմերի փոխադարձ եւ ազատ կամահայտնությամբ, կողմերն են որոշում պայմանագիր կնքել-չկնքելու հարցը, եւ այդ պայմանագրի հիման վրա էլ կարգավորվում են կողմերի փոխադարձությունները:

5. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմերի սահմանադրականությունը պարզելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ դրանցով նախատեսված ինստիտուտի սահմանադրահիրավական բովանդակությանը եւ վերաբերելի օրենսդրական կարգավորումներին: Այսպես. պահանջի գիշման պայմանագրի /ցեսիայի/ ինստիտուտը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրը)՝ «Անձանց փոփոխվելը պարտավորության մեջ» վերտառությամբ 25-րդ գլուխվ, որի 397-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է. «Պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործադրով (պահանջի գիշում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա»: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմում իշխա-

տակված ցեսիայի պայմանագիրը քաղաքացիակալական պայմանագիր է, որի նկատմամբ կիրառելի են ցեսիայի ինստիտուտին վերաբերելի ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթները, իսկ տվյալ օրենսդրական դրույթների հիման վրա առաջացած իրավահարաբերությունները կրում են քաղաքացիակալական բնույթ, անկախ այն հանգամանքից, որ դրանք առնչվում են նաև հարկային իրավահարաբերությունները կանոնակարգող նորմերին։ Ինչպես վկայում է օրենսգրքի կանոնակարգում՝ ցեսիայի բովանդակությունը հանգում է որոշակի պարտավորության հիման վրա առկա իրավունքի կամ պահանջի անցմանն այլ անձի։ Տվյալ պարագայում տեղի է ունենում պարտավորության մեջ պարտատիրոջ փոփոխություն։ ցեսիայի պայմանագրով փոփանցվում է միայն պահանջի իրավունքը, բայց ոչ պարտքը։ Պարտապանի փոփոխություն ցեսիայի միջոցով չի իրականացվում։ Ընդ որում, պարտավորության մեջ պարտատիրոջ փոփոխության համար պարտապանի համաձայնությունն անհրաժեշտ չէ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածն էլ նախատեսում է, որ «Առանց պարտապանի համաձայնության պահանջի զիջումն այն պարտավորությամբ, որում պարտատիրոջ անձն էական նշանակություն ունի պարտապանի համար, չի բույլատրվում, բացառությամբ «Ապահոված հիփոքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ակտիվների արժեքավորման եւ ակտիվներով ապահոված արժեքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի»։

Ցեսիայի պայմանագրի օրյեկտ կարող է լինել ցանկացած իրավունք կամ պահանջ, բացառությամբ «Պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված իրավունքների՝ ներառյալ ալիմնենտի եւ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջները» (ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, հոդված 398): Փոխանցվող իրավունքի ծավալի առնչությամբ օրենսգիրը սահմանում է, որ «Ակզրնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով եւ պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով։ Մասնավորապես, նոր պարտատիրոջն են անցնում պարտավորության կատարումն ապահովող, ինչպես նաև պահանջի հետ կապված այլ իրավունքները՝ ներառյալ չճարված տոկոսների նկատմամբ իրավունքը» (ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, հոդված 399): Այս դրույթի տրամաբանությունից

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հետեւում է նաեւ, որ հետագայում պարտավորությունը չկատարելու պարագայում կամ այն կետանցով կատարելու դեպքում **օրենքով նախատեսված տոկոսները /ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդված/** պահանջելու իրավունքը եւս ծագում է նոր պարտատիրոջ մոտ. նման պահանջը եւս ուղղվում է ցեսիայի պայմանագրով որպես պարտապան հանդես եկող անձի դեմ, քանզի դառնում է սկզբնական պահանջի տրամարանական շարունակությունը եւ կազմում դրա մի մասը:

Օրենսգիրքը կանոնակարգում է նաեւ սկզբնական պարտատիրոջ պատասխանատվության առնչությամբ ծագող հարաբերությունները: Մասնավորապես, օրենսգրքի 405-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Պահանջը զիջած սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջեւ պատասխանատվություն է կրում նրան փոխանցված պահանջի անվավերության համար, սակայն պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից այդ պահանջը չկատարելու համար, քացի այն դեպքից, երբ սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջեւ երաշխավորություն է ստանձնել պարտապանի համար»: Նշված դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսում է սկզբնական պարտատիրոջ պատասխանատվության երկու դեպք միայն, եւ չի նախատեսում այլ դեպքերի համար որեւէ դիսպոզիտիվ կարգավորում, այսինքն՝ քացառում է սկզբնական պարտատիրոջ պատասխանատվության երկու դեպք միայն, այդ թվում՝ կողմերի համաձայնությամբ, քանզի օրենսգրքի 405-րդ հոդվածը նախատեսում է իմպերատիվ բնույթի իրավադրույթ: Այս առումով սահմանադրական դատարանը գտնում է, որ ցեսիայի ինստիտուտի առնչությամբ առկա չէ որեւէ հակասություն, մի կողմից, հարկային օրենսդրության, մյուս կողմից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումների միջև: Իր հերթին իրավակիրառ պրակտիկան այս ինստիտուտի կիրառման պարագայում պետք է առաջնորդվի դրա օրենսդրական համակարգային կանոնակարգման ամբողջական տրամարանությամբ:

6. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւում է նաեւ հարկային իրավահարաբերությունների սուբյեկտների միջև ցեսիայի պայմանագրի կնքման եւ դրա իրավական հետեւանքների առանձնահատկությունների քացահայտումը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկային իրավահարաբերությունները կանոնակարգող օրենսդրության շրջանակներում ցե-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սիայի ինստիտուտի նախատեսումը կարեւոր նշանակություն ունի ինչպես հարկատուների եւ պետության միջեւ բնականոն հարկային իրավահարաբերությունները պահպանելու, հարկատուների հարկային պարտավորությունների կատարման օժանդակելու, այնպես էլ գործարար շրջանակներում պայմանագրային պարտավորությունների բարեխիղճ կատարումը երաշխավորելու եւ տնտեսվարողների բնականոն գործունեության շարունակականությունն ապահովելու տեսանկյունից։ Սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ նշված ինստիտուտի նախատեսումը կարեւոր կանխարգելիչ նշանակություն ունի եւ կոչված է ապահովելու տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեությունն այն իրավիճակներում, երբ վերջիններս չեն կարողանում ժամանակին կատարել պետության առջև իրենց հարկային պարտավորությունները։ Ըստ Էության նշված ինստիտուտն այլընտրանք կարող է հանդիսանալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ եւ 10-րդ հոդվածներով նախատեսված հարկատուի նկատմամբ հարկադրական սնանկության գործ նախաձեռնելու ինստիտուտին, որը կարող է հանգեցնել տնտեսվարող սուբյեկտի լուծարմանը։

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկային իրավահարաբերություններում ցեսիայի պայմանագրի եւ դրա իրավական հետեւանքների առանձնահատկություններն ի հայտ են գալիս հետեւյալ հարցադրման շրջանակներում։ արդյո՞ք ցեսիայի պայմանագրի կնքմամբ դադարում է ցեղենտի/հարկատուի հարկային պարտավորությունը։ Խնդիրը կայանում է նրանում, որ հարկատուն հանդես է գալիս մի կողմից՝ որպես հարկատու՝ հարկային իրավահարաբերությունների շրջանակներում, եւ որպես ցեղենտ/սկզբնական պարտատեր՝ քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակներում։ Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակներում հարկատուն/ցեղենտը պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից նոր պարտատիրոջ/ցեսիոնարի նկատմամբ ցեսիայի պայմանագրով պարտավորության կատարման համար, սակայն հարկային իրավահարաբերություններում շարունակում է կրել համապատասխան պարտավորությունները։ Այս մասին է վկայում, մասնավորապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, սահմանելով, որ՝ «Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆի-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

զիկական անձի համար՝ նաեւ նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ քան սահմանված չէ»: Միաժամանակ, վերաբերելի իրավանորմերի վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ցեսիայի պայմանագրի կնքումը, ինքնին, չի կարող հավասարեցվել հարկատուի կողմից պարտավորության կատարմանը հետեւյալ պատճառաբանությամբ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի վիճարկվող 18-րդ մասում, ի թիվս այլնի, ներկայացված է նաեւ պայմանագրի վերջնանպատակը՝ «ստացված գումարներն ուղղելու հարկ վճարողի պարտավորությունների մարմանը»: Խսկ նույն հոդվածի վիճարկվող 19-րդ մասը նաեւ սահմանում է, որ «... պահանջի իրացման պահին, ... կատարվում է պարտավորությունների վերահաշվարկ»: Նշված իրավանորմերից բխում է, որ անձը շարունակում է տվյալ հարկային պարտավորության կրող հանդիսանալ մինչեւ ցեսիայի պայմանագրով որպես պարտապան հանդես եկող անձի կողմից իր պարտավորության կատարման պահը, քանզի պարտավորությունների վերահաշվարկը կատարվում է միայն պահանջի իրացման պահին, եւ ոչ թե ցեսիայի պայմանագրի կնքման պահին: Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցեսիայի պայմանագրի կնքումը չի կարող ինքնանպատակ լինել: Թեեւ ցեսիայի պայմանագրի կնքման վերաբերյալ վիճարկվող օրենսդրական դրույթները կրում են դիսպոզիտիվ բնույթ, այդուհանդերձ, նման ընթացակարգով հարկատուի հարկային պարտավորությունների կատարման ինստիտուտը կիրառելիս հարկային մարմինները պետք է ձեռնամուխ լինեն ցեսիայի պայմանագրի կատարման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը եւ ստացված գումարը հարկատուի հարկային պարտավորությունների կատարմանն ուղղելուն:

Ամփոփելով վերոգրյալ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային իրավահարաբերությունների շրջանակներում կնքված ցեսիայի պայմանագրով՝

ա/ հետազայտմ պարտավորությունը չկատարելու կամ այն կետանցով կատարելու դեպքերում հարկային մարմնի մոտ ծագում է ցեսիայի պայմանագրով որպես պարտապան հանդես եկող անձից օրենքով, այն է՝ **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ** պահանջելու իրավունք,

բ/ ցեսիայի պայմանագրի շրջանակներում պահանջի իրացման պահին վերահաշվարկ կատարելիս հարկային մարմնի մոտ ծագում է ցեղենտից/հարկատուից հարկային պարտավորությունը կետանցով կա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տարելու համար սահմանված տույժերի եւ տուգանքների գումարները պահանջելու իրավունք:

7. Միջազգային պրակտիկայի ուսումնասիրումը վկայում է, որ հարկային պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար տարբեր երկրներում օրենքի ուժով հարկային մարմիններին իրավունք է վերապահվում գործադրել հարկատուի պարտապանների պարտքի հաշվին հարկային պարտավորությունների մարման ինստիտուտը: Ընդունում, դերիտորական պարտքի գանձումը կատարվում է հարկատուի կողմից պարտապանների վերաբերյալ ներկայացված հավաստի տեղեկատվության, ինչպես նաև հարկային մարմնի տնօրինության տակ առկա տեղեկատվության հիման վրա (օրինակ՝ Սոլյովայի Հանրապետության հարկային օրենսգիրք /հոդվածներ 194, 205/, Չեխիայի Հանրապետության հարկային օրենսգիրք /հոդվածներ 178, 180/, Սերբիայի Հանրապետության Հարկային վարույթի եւ հարկային վարչակազմի մասին օրենք /հոդվածներ 92, 96/, Ղազախստանի Հանրապետության հարկային օրենսգիրք /հոդված 616/, Վրաստանի հարկային օրենսգիրք /հոդված 86/ եւ այլն):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ցեսիայի պայմանագրի հիման վրա դերիտորական պարտքերի հաշվին հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտն ավելի մեծ երաշխիքներ է ստեղծում իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության ու տնտեսավարման բնականոն պայմաններ երաշխավորելու առումով: Խնդիրն այն է, որ այդ ինստիտուտի կիրառումը բխի իրավակարգավորման բովանդակությունից եւ ոչ իրավաչափ վարչարարությամբ չուժադրվեն տնտեսավարող սուբյեկտների իրավունքները:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վեճի առարկա հոդվածի կիրառումը չի կարող իմաստագրկվել, եթե ցեսիայի պայմանագիրը հարկային մարմնի կողմից գործնականում անտեսվում է: Նման պայմաններում դիմոնդի իրավունքների հնարավոր խախտումը պայմանավորվում է ոչ թե «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18 եւ 19-րդ մասերի սահմանադրահրավական բովանդակությամբ, այլ դրանց կիրառման հանգամանքով:

Միաժամանակ սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ վիճարկվող իրավանորմերի նպատակային կիրառումն զգալիորեն պայմանավորված է դրանց հիման վրա կնք-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ված պայմանագրերի հստակ բովանդակությամբ եւ դրանցում կողմերի իրավունքների ու պարտականությունների հստակ կանոնակարգումով, ինչը թույլ կտա նվազագույնի հասցնել դրանց կիրառման արդյունքում առաջացող խնդիրները: Անթույլատրելի է նման կարգի պայմանագրերի նկատմամբ ձեւական մոտեցումը, քանզի պայմանագրային հստակ, բազմակողմանի եւ մանրամասն կանոնակարգումներով է մեծապես պայմանավորված դրա կատարումը եւ վիճելի իրավիճակների հաղթահարումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Յ.

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18 եւ 19-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 սեպտեմբերի 2013 թվականի
ՍՊ-1106**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ԱՇԳԱԲԱՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՅ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԵԾՈՒՄՆ ՄԱՍԻՆ»
1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ՀԱՄԱՅՆՎԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ (ԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄՔ)
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

10 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թողյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի տեղակալ Ա. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 30-ին Աշգաբատում ստորագրված՝ «Անկախ պետությունների

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

համագործակցության մասնակից պետությունների միջզբաղարանային բաժանորդագրության համակարգի ստեղծման մասին» 1999 թվականի հունվարի 13-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գրձը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի հունիսի 25-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքաբարված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով Արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջզբաղարանային բաժանորդագրության համակարգի ստեղծման մասին» 1999 թվականի հունվարի 13-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը (Արձանագրություն) ստորագրվել է 2012 թվականի մայիսի 30-ին՝ Աշգարատում, Հայաստանի Հանրապետության վարչապետ Տ. Սարգսյանի կողմից:

Արձանագրության համար պայմանագրափական հիմք է հանդիսանում 1999 թվականի հունվարի 13-ին Սարատովում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջզբաղարանային բաժանորդագրության համակարգի ստեղծման մասին համաձայնագիրը (Համաձայնագիր), որը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 1999 թվականի նոյեմբերի 23-ին:

Արձանագրության վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունն արել է հայտարարություն:

2. Ըստ գործի նյութերի՝ Արձանագրությունն ուղղված է Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգի, ինչպես նաև Համաձայնագրի մի շարք դրույթների հստակեցմանը:

3. Ըստ Արձանագրության՝ կողմերը համաձայնում են Համաձայնագրում կատարել հետեւյալ փոփոխությունները.

- 4-րդ հոդվածի 1-ին կետում «Գիտական-տեխնոլոգիական զար-

«ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գացման միջպետական կոմիտե (հետազայում՝ ԳՏԶ ՄԿ)» բառերը փոխարինել «Գիտական-տեխնիկական եւ նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհուրդ (հետազայում՝ ԳՏՆ ՄԽ)» բառերով եւ «Տնտեսագիտական խորհուրդի միջպետական տնտեսագիտական կոմիտե (հետազայում՝ ՄՏԿ)» բառերը՝ «ԱՊՀ տնտեսագիտական խորհուրդ» բառերով.

- 4-րդ հոդվածի 2-րդ կետում ՄՏԿ հապավումը փոխարինել «ԱՊՀ տնտեսագիտական խորհուրդ» բառերով.

- 4-րդ հոդվածի 3-րդ կետում ԳՏԶ ՄԿ հապավումը փոխարինել ԳՏՆ ՄԽ հապավումով.

- 9-րդ հոդվածում բացառել «Եւ ուժի մեջ են մտնում Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգին համապատասխան» բառերը:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2012 թվականի մայիսի 30-ին Աշգարատում ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջգրադարանային բաժանորդագրության համակարգի ստեղծման մասին» 1999 թվականի հունվարի 13-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 սեպտեմբերի 2013 թվականի
ՍԴ.Ո-1107**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱՆԴԱՌ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻԶԵՎ
ԳՈՐԾԵՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՎԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ
ԾՐՁԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

10 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյա-
նի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազար-
յանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական
ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի
նախարարի տեղակալ Զ. Մնացականյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի դեկտեմբերի 17-ին Բյուսելում ստորագրված՝ «Եվրոպական համայնքների եւ դրանց անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Հայաստանի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի՝ Եվրոպական միության ծրագրերին Հայաստանի Հանրապետության մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ Եվրոպական միության եւ Հայաստանի Հանրապետության միջև շրջանակային համաձայնագրի մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթրերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ.**

1. «Եվրոպական համայնքների եւ դրանց անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Հայաստանի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի՝ Եվրոպական միության ծրագրերին Հայաստանի Հանրապետության մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ Եվրոպական միության եւ Հայաստանի Հանրապետության միջև շրջանակային համաձայնագրի մասին» արձանագրությունն ստորագրվել է 2012թ. դեկտեմբերի 17-ին՝ Բյուսելում:

Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությանը հճարավորություն է ընձեռվում մասնակցելու Եվրոպական միության այն բոլոր ընթացիկ եւ հետագա ծրագրերին, որոնք բաց են Հայաստանի Հանրապետության մասնակցության համար՝ համաձայն այդ ծրագրերի հաստատման վերաբերյալ համապատասխան դրույթների:

2. Արձանագրության համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

ա) կատարել ֆինանսական ներդրում Եվրոպական միության ընդհանուր բյուջեում՝ այն կոնկրետ ծրագրերին համապատասխան, որոնց մասնակցում է,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թ) սահմանել Եվրոպական հանձնաժողովի եւ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջեւ Փոխըմբռնման հուշագրում (հետագայում կնքվելիք) յուրաքանչյուր կոճկրետ ծրագրին Հայաստանի մասնակցությանն առնչվող հատուկ դրույյթներն ու պայմանները, մասնավորապես՝ վճարման ենթակա ֆինանսական ներդրումը եւ հաշվետվությունների ու զնահատման ընթացակարգերը՝ հիմք ընդունելով տվյալ ծրագրերի կողմից հաստատված չափանիշները:

3. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով կողմերի՝ միմյանց ծանուցելու օրվան հաջորդող ամսվա առաջին օրը:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ դրված սահմանադրափական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2012 թվականի դեկտեմբերի 17-ին Բյուսելում ստորագրված՝ «Եվրոպական համայնքների եւ դրանց անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Հայաստանի Հանրապետության՝ մյուս կողմից, միջեւ Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի՝ Եվրոպական միության ծրագրերին Հայաստանի Հանրապետության մասնակցության ընդիհանուր սկզբունքների վերաբերյալ Եվրոպական միության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ շրջանակային համաձայնագրի մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10 սեպտեմբերի 2013 թվականի
ՍՊ-1108



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

**2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՎԱՔՎԱԿԱՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱԴԱՐՁ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄՎՄԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

10 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարուրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյա-
նի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող),
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական
ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին
տեղակալ Ռ. Հարուբյունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,
«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի դեկտեմբերի 19-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պահպանության փոխադարձ ապահովման մասին» 2004 թվականի հունիսի 18-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության արիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 25 հունիսի 2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պահպանության փոփոխադարձ ապահովման մասին» 2004թ. հունիսի 18-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունն ստորագրվել է 2012թ. դեկտեմբերի 19-ին՝ Մոսկվայում:

Արձանագրությունը նախատեսում է իրականացնել պայմանագրային բնույթի առանձին ձեւակերպումների եւ եզրույթների խմբագրական փոփոխություններ եւ լրացումներ 2004թ. հունիսի 18-ի Համաձայնագրում: Մասնավորապես, առաջարկվում է ներածության մեջ օգտագործվող «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության» բառերից հետո ավելացնել «ՀԱՊԿ» բառերը, 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունում «օրենսդրությամբ» բառը փոխարինել «նորմատիվ իրավական ակտերով» բառերով, «նմուշների» բառը փոխարինել «պատկերի» բառով:

Առաջարկվում է նաև բացել առանձին ձեւակերպումների բովանդակությունը: Մասնավորապես, ըստ Արձանագրության՝ «իազորված մարմիններ» ասելով՝ այսուհետ պետք է հասկանալ պետական մարմիններ եւ/կամ իրավաբանական անձինք (կազմակերպություններ, մշտապես գործող աշխատանքային մարմիններ), որոնք լիազորված են Կողմերի կողմից ստանալու, փոխանցելու, պահպանելու, օգտագործե-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

լու եւ պաշտպանելու փոխանցված (ստացված) եւ/կամ համագործակցության ընթացքում գոյացած գաղտնի տեղեկատվությունը»:

Արձանագրությունը նախատեսում է նաեւ առանձին ձեւակերպումների ճշգրտում, օրինակ՝ 1-ին հոդվածում առաջարկվում է՝ «Կողմ – պետություններում» բառերը փոխարինել «Կողմերից յուրաքանչյուրին» բառերով, «նման տեղեկատվության տարածման» բառերը փոխարինել «այդպիսի տեղեկատվության դիմելու» բառերով եւ այլն:

Նախատեսվում է նաեւ 1-ին հոդվածում ավելացնել նոր՝ տասներկուերորդ պարբերություն՝ հետեւյալ բովանդակությամբ. «ՀԱՊԿ մշտական գործող աշխատանքային մարմիններ» - քարտուղարություն եւ ՀԱՊԿ միավորված շտար», իսկ 3-րդ հոդվածի սկզբում ավելացնել նոր պարբերություն՝ հետեւյալ բովանդակությամբ. «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում օգտագործվում են գաղտնիության հետեւյալ աստիճանները եւ իրենց համապատասխան գաղտնիության կնիք-մակագրությունները՝ «Հատուկ կարեւորության», «Հույժ գաղտնի», «Գաղտնի», որոնք համադրելի են ՀԱՊԿ անդամ պետությունների գաղտնիության աստիճանների եւ գաղտնիության կնիք-մակագրությունների հետ»:

Տարաբնույթ ձեւակերպումների եւ եզրույթների խմբագրական փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել նաեւ Համաձայնագրի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 14-րդ, 16-րդ եւ 17-րդ հոդվածներում:

Ավելացել է նոր՝ 14.1 հոդված, որը սահմանում է Համաձայնագրին միջազգային իրավունքի նոր սուբյեկտների միանալու կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց.**

1. 2012 թվականի դեկտեմբերի 19-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պահպանության փոխադարձ ապահովման մասին» 2004 թվականի հունիսի 18-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 սեպտեմբերի 2013 թվականի
ՍԴ.Ո -1109**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԵMBERԻ 17-ԻՆ ԲԲՀՈՒՍԵԼՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ
ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.**

Քաղ. Երեւան

10 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Զ. Մնացականյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի դեկտեմբերի 17-ին Բյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրում ամրագրված պար-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 25.06.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավիր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2012 թվականի դեկտեմբերի 17-ին Քրյուսելում, որի նպատակն է ՀՀ քաղաքացիներին 180 օրվա յուրաքանչյուր ժամանակահատվածի ընթացքում 90 օրվանից ոչ ավել ժամանակահատվածով՝ որոշակի նպատակով ԵՄ տարածքում գտնվելու համար վիզաների տրամադրման դյուրացումը:

2. Համաձայնագրով սահմանված են ճամփորդության նպատակի վերաբերյալ փաստաթղթային հիմնավորման կարգը, բազմակի մուտքի վիզաների տրամադրման կարգը, ինչպես նաև բացառիկ հանգամանքներում վիզայի ժամկետի երկարածզման եւ ծեւակերպումների համար վճարումների կատարման կարգն ու պայմանները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները:

- ստեղծել փորձագետների համատեղ կոմիտե՝ Համաձայնագրի իրականացման դիտանցման, դրանում փոփոխություններ եւ լրացնումներ կատարելու վերաբերյալ առաջարկների ներկայացման, ինչպես նաև Համաձայնագրի դրույթների մեկնարանման կամ կիրառման հետ կապված վեճերի կարգավորման նպատակով,
- վավերացնել Համաձայնագիրը ներպետական համապատասխան ընթացակարգերի համաձայն:

4. Համաձայնագրով սահմանված են նաև դրա ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները, գործողության ժամկետը, դրանում փոփոխություններ եւ լրացնումներ կատարելու կարգն ու պայմանները, ինչպես նաև կասեցման եւ դադարեցման կարգն ու պայմանները:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Յ**.

1. 2012 թվականի դեկտեմբերի 17-ին Բյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 սեպտեմբերի 2013 թվականի
ՍՊ-1110**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

**2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԱՇԳԱԲԱՏՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

ՀԱՄԱԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՅՆ

ԲՆԱԳԱՎԱռ-ՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

10 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական քանի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրսաց նիստում գրավոր լնքացակարգով քննեց «2012 թվականի դեկտեմբերի 5-ին Աշգաբատում ստորագրված՝ Անկախ պետություն-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

Աերի համագործակցության մասնակից պետությունների՝ ինտեգրված արժութային շուկայի կազմակերպման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում (կից Վերապահումով) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանդրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի հուլիսի 9-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Անկախ պետությունների համագործակցության մասնակիցի պետությունների՝ ինտեգրված արժութային շուկայի կազմակերպման քնազավառում համագործակցության մասին համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2012 թվականի դեկտեմբերի 5-ին՝ Աշգարատում, Հայաստանի Հանրապետության Նախագահ U. Սարգսյանի կողմից:

Համաձայնագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը կատարել է վերապահում:

2. Համաձայնագրի նպատակն է ԱՊՀ մասնակից պետությունների ինտեգրված արժութային շուկայում արտաքինային գործադրությունների հրականացման գործում կողմերի ռեզիլիանտ բանկերի հրավահավասար եւ փոխահավետ մասնակցության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) մյուս կողմերի ռեզիլիենտ բանկերին, որոնք իրենց հաստատության պետության օրենսդրությանի համապատասխան իրավունք ունեն իրականացնելու արժութային գործարքներ, ապահովել մուտք դեպի իրենց ազգային արժութային շուկա՝ միջքանկային փոխարկման գործարքների իրականացման նպատակով, նրանց տրամադրելով ոչ պա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

կաս բարենպաստ պայմաններ, քանի իր ռեզլիդենտ բանկերին տրամադրվածն է.

ρ) Ζωμαδωμαρφη ληφθειν ήτην μεταβασιν ήτην ρημαρφην ληφθειν:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին, կոչված են քարենպատ պայմաններ ստեղծելու ԱՊՀ մասնակից պետությունների միջև տնտեսական ինտեգրման եւ ֆինանսական շոկաների արդյունավետ գործունեության զարգացման խթանման համար:

Ելեկով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայատանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2012 թվականի դեկտեմբերի 5-ին Աշգարատում ստորագրված՝
Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետու-
թյունների՝ ինտեգրված արժութային շուկայի կազմակերպման բնագա-
վառում համագործակցության մասին համաձայնագրում (կից վերա-
պահումով) ամրագրված պարտավորությունները համապատասխա-
նում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10 սեպտեմբերի 2013 թվականի
ՍԴ-1111



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

**2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԱՑԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԱՇԳԱԲԱՏՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՄԱԿԻՅ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

10 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի դեկտեմբերի 5-ին Աշգարատում ստորագրված՝ Անկախ պետություննե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թի համագործակցության մասնակից պետությունների ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների դեկավարների խորհրդի կազմավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի հուլիսի 9-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների դեկավարների խորհրդի կազմավորման մասին համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2012 թվականի դեկտեմբերի 5-ին՝ Աշգարաբում, Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյանի կողմից:

Համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների դեկավարների խորհրդի մասին կանոնադրությունը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները:

ա) կողմերի հետ հիմնել Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների դեկավարների խորհուրդը.

բ) սահմանել Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու իրավասու մարմին եւ այդ մասին տեղեկացնել ավանդապահին՝ միաժամանակ ծանուցելով Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին, ինչպես նաև վերոհիշյալ պատասխանատու իրավասու մարմնի փոխվելու դեպքում՝ տեղեկացնել ավանդապահին.

գ) ապահովել Խորհրդի նիստերի անցկացման ֆինանսավորման

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հետ կապված ծախսերի իրականացումը՝ եթե ընդունող կողմ է համարվում Հայաստանի Հանրապետությունը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին եւ պայմանավորված են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) եւ ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործում փոխգործակցության համակարգման ու զարգացման անհրաժեշտությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2012 թվականի դեկտեմբերի 5-ին Աշգարատում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ֆինանսական հետախուզության ստորաբաժանումների դեկավարների խորհրդի կազմավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 սեպտեմբերի 2013 թվականի
ՍՊԸ-1112**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲԲՅԱՆԱԿԱՆ ԽԱՆՐԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ԱՌԱՋ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՑ ՀԵ-ՏԵՐՆՈՒՄՆԱՆ /ՈԵՎՀՄԻՒՅՆՅ/ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՎՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.

Քաղ. Երեւան

10 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով՝ Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (գեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միջրացիոն պետական ծառայության պետ Գ. Եղանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի ապրիլի 19-ին Բյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ առանց թույլտվության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բնակվող անձանց հետընդունման /ուսադմիսիայի/ մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 25.06.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման /ուսադմիսիայի/ մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ ստորագրվել է Քրյուսելում 2013թ. ապրիլի 19-ին՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանի կողմից:

Համաձայնագրի նախարանում հստակ արձանագրված է, որ Պայմանավորվող կողմերի հիմնական նպատակն է ամրապնդել իրենց համագործակցությունն անօրինական միզրացիայի դեմ առավել արդյունավետ պայքար ծավալելու համար:

Համաձայնագրի միջոցով Պայմանավորվող կողմերը նախատեսում են փոխադարձության հիման վրա ստեղծել արագ եւ արդյունավետ իրավական ընթացակարգեր /կառուցակարգեր/ այն անձանց հայտնաբերման եւ անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայաստանի կամ Եվրոպական միության անդամ պետություններից մեկի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար պահանջներին, եւ ոյուրացնելու այդպիսի անձանց տարանցումը՝ համագործակցության ողով:

Իբրեւ հիմնարար եւ առանցքային սկզբունք՝ Համաձայնագիրը որոշակի սահմանում է, որ դրա գործողության ընթացքում անհրաժեշտ է ապահովել մարդու իրավունքների եւ պարտավորությունների ու պարտականությունների նկատմամբ հարգանքը, իրականացնել հետընդունված անձանց իրավունքների պաշտպանությունը, որոնք բխում են նրանց վերաբերյալ կիրառելի միջազգային փաստաթղթերից, մաս-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նավորապես, 1948թ. դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, 1950թ. նոյեմբերի 4-ի՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայից եւ այլն:

2. Զննության առարկա Համաձայնագիրը բաղկացած է նախարանից, 24 հոդվածներից եւ դրա անբաժանելի մասը հանդիսացող 6 հավելվածներից:

Համաձայնագրի 1-ին հոդվածում տրված են դրա տեքստում օգտագործվող հասկացությունների /եզրույթների/ սահմանումները եւ դրանց իրավակիրառ նշանակությունը:

Համաձայնագրի՝ «Հիմնարար սկզբունքները» վերտառությամբ 2-րդ հոդվածում առանձնակի շեշտված է, որ անկանոն միզրացիայի դեմ համագործակցելիս հարցում ներկայացրած պետությունը պետք է նախապատվություն տա կամավոր, այլ ոչ թե պարտադրված վերադարձին, եթե պատճառներ չկան հավատալու, որ այն կխոշընդոտի անձի վերադարձին հարցում ստացած պետություն:

Համաձայնագրի 1-ին եւ 2-րդ բաժիններն ամրագրում են հետընդունման մասով Հայաստանի Հանրապետության /այսուհետ՝ Հայաստան/ եւ Եվրոպական միության /այսուհետ՝ Միություն/ պարտավորությունները, իսկ 3-րդ բաժինը նվիրված է հետընդունման իրավական ընթացակարգերին: Նախատեսված են այն անձանց շրջանակները, որոնք ենթակա են սահմանված կարգով հետընդունման, ինչպես նաև հետընդունման պարզուց պայմանները եւ համապատասխան կառուցակարգերը:

Սահմանված է, որ հետընդունվող անձի ցանկացած փոխանցման համար պահանջվում է հետընդունման դիմումի ներկայացում՝ հարցում ստացած պետության իրավասու մարմնին:

Համաձայնագրի 8-րդ հոդվածում շարադրված են հետընդունման դիմումին ներկայացվող հիմնական պահանջները, իսկ հետընդունման դիմումի համար կիրառելի ընդհանուր ձևը ներկայացված է Համաձայնագրի 5-րդ հավելվածում:

Հետընդունման դիմումը կարող է ներկայացվել կապի ցանկացած միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային միջոցներով:

Քաղաքացիության մասով ապացուցման միջոցները թվարկված են Համաձայնագրի 9-րդ հոդվածում եւ համապատասխանաբար՝ դրա 1-ին եւ 2-րդ հավելվածներում, իսկ երրորդ երկրի քաղաքացիների եւ քա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դաքացիություն չունեցող անձանց մասով ապացուցման միջոցները՝ Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հավելվածներում /հոդված 10/:

Համաձայնագրին համապատասխան՝ հետքնդունման ենթակա անձինք կարող են տեղափոխվել ցանկացած միջոցով, այդ թվում՝ նաև օդային ուղիներով: Մխալմամբ իրականացված հետքնդունման իրավական հետեւանքները նախատեսված են Համաձայնագրի 13-րդ հոդվածում:

Համաձայնագրում /հոդված 17/ հատկապես մատնանշված են անձանց անձնական տվյալների պաշտպանության հանգամանքը և այդ կապակցությամբ Կողմերի որոշակի պարտավորությունները:

Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Համաձայնագիրը վավերացվում կամ հաստատվում է Պայմանավորվող կողմերի կողմից՝ իրենց համապատասխան ընթացակարգերի համաձայն:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկրորդ ամսվա առաջին օրը՝ այն ամսաթվից հետո, երբ վերջին Պայմանավորվող կողմը ծանուցել է մյուս Կողմին, որ վերը նշված ընթացակարգերը կատարվել են /հոդված 23/:

3. Համաձայնագրով Հայաստանն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները:

- տալիս է նախապատվություն կամավոր, այլ ոչ պարտադրված վերադարձին,
- հետ է ընդունում սեփական քաղաքացիներին՝ անդամ պետության դիմումի հիման վրա՝ ըստ Համաձայնագրի 3-րդ հոդվածի պահանջների,
- հետ է ընդունում նաև նույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց անշափահաս չամուսնացած երեխաներին, ինչպես նաև ամուսիններին,
- հետ է ընդունում այն անձանց, ովքեր իրաժարվել են Հայաստանի քաղաքացիությունից՝ անդամ պետության տարածք մուտք գործելուց հետո,
- տրամադրում է հետքնդունվող անձի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթ /3 աշխատանքային օրվա ընթացքում/,
- հետ է ընդունում երրորդ երկրի քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ապահովում է իր տարածք հետընդունված անձանց իրավունքների պաշտպանությունը՝ համաձայն նրանց նկատմամբ կիրառելի միջազգային փաստաթղթերի,
- սահմանված կարգով ներկայացնում է հետընդունման դիմում՝ հարցում ստացած պետության իրավասու մարմնին,
- պահպանում է հետընդունման դիմումի համար կիրառելի ընդհանուր ձեւը՝ ըստ Համաձայնագրի 5-րդ հավելվածի,
- գրավոր ծանուցում է հարցում ստացած պետության իրավասու մարմիններին՝ փոխադրման ժամկետների, մուտքի անցակետի եւ այլ տեղեկությունների մասին,
- եթե հանդես է զայխ որպես հարցում ներկայացրած պետություն, ապա պարտավորվում է հոգալ հետընդունվող անձի կամ երրորդ կողմի հետընդունման հետ կապված տրանսպորտային բոլոր ծախսերը,
- կրում է լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ՝ համատեղ կոմիտե ստեղծելու, ինչպես նաև կոմիտեի գործունեությանը նաևնակցելու կապակցությամբ /հողված 19/,
- ապահովում է նշված կոմիտեի կողմից ընդունված որոշումների կատարումը,
- իրականացնում է անձնական տվյալների սահմանված կարգով պաշտպանությունը,
- նշանակում է իրավասու մարմիններ՝ Համաձայնագրի 20-րդ հոդվածին համապատասխան:

4. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագիրը կոչված է ամրապնդելու Հայաստանի եւ Միության համագործակցությունն անձանց անօրինական միջրացիայի դեմ՝ սահմանելով փոխադրածության հիման վրա արագ եւ արդյունավետ հետընդունման ընթացակարգեր ու դյուրացնելով անձանց սահմանված կարգով տարանցումը։ Անկանոն միջրացիայի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի ընթացքում Կողմերը պարտավորվում են ապահովել մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները եւ նորմերը։

Սույն Համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին, միտված են միջրացիոն քաղաքականության ոլորտում Հայաստանի եւ Միության կապերի ընդլայնմանը եւ խորացմանը։

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ենելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Յ**.

1. 2013 թվականի ապրիլի 19-ին Քյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջև առանց քույլտվության բնակվող անձանց հետընդունման /ուաղմիսիայի/ մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 սեպտեմբերի 2013 թվականի
ՍՊ-1113**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՋՈՐԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
204.38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

18 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող),
Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի,
Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի և Ա. Ղազարյանի,
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժո-
ղովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխա-
տակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության
բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առա-
ջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչներ Լ. Դրմեյանի և
Ռ. Մախմուլյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դոճրաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության՝ 01.03.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարան ներկայացված դիմումում դիմողի ներկայացուցիչները նպատակահարմար էին համարել սույն գործի միավորումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի հետ՝ նկատի ունենալով քննության առարկայի նույնաբնույթ լինելը: ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը քննեց առանձին՝ հաշվի առնելով, որ տվյալ իրավահարաբերությունների նույնաբնույթակ լինելով հանդերձ, ՀՀ վճռաբեկ դատարանի երկու պալատներում այս հարցում ձեւավորվել է տարաբնույթ իրավակիրառական պրակտիկա, ինչպես նաև անհրաժեշտություն առաջացավ առավել համակողմանի ուսումնասիրել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի կողմից սույն հարցի առնչությամբ ձեւավորած իրավական նախադեպերը: Այդ նկատառումներից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը 2013թ. հուլիսի 4-ին հետագեց սույն գործի քննությունը, որոշելով, մասնավորապես, գործի դատաքննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով, ինչպես նաև՝ «Նկատի ունենալով, որ քննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ դատական պրակտիկայում տեղ են գտնել տարակերպ մեկնաբանություններ եւ հաշվի առնելով, որ տվյալ հարցի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում լսել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցչի պարզաբանումները, ուստի գործի բանավոր դատաքննությանը իրավիրել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան իրավասությամբ օժտված ներկայացուցչին եւ առաջարկել ՀՀ վճռաբեկ դատարանին ապահովել վերջինիս մասնակցությունը դատաքննությանը»: Նույն որոշմամբ սահմանադրական դատարանը ՀՀ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատական դեպարտամենտից պահանջեց նաեւ՝ «...մեկամսյա ժամկետում ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի՝ 2006 թվականից հետո քննության առած, առանց քացառության, բոլոր գործերով ընդունած որոշումների պատճենները»:

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից, սահմանված ժամկետում, սահմանադրական դատարան է ներկայացվել նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի կողմից ընդունված թվով 150 որոշում:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների քացարությունները, ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչների պարզաբանումները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա նյուև փաստարդերը, այդ թվում՝ նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի կողմից ընդունված որոշումները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Յ Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից սուրագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման կանոնները» վերտառությամբ 204.38-րդ հոդվածը սահմանում է.

«1. Եթե սույն բաժնով նախատեսված չեն հատուկ կանոններ, ապա նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդիհանուր կանոնները:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմանք հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 204.32 կամ 204.33 հոդվածով նախատեսված հանգամանքներն ըստ էության չեն կարող ազդել գործի ելքի վրա:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդիանուր կարգով կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարան»:

Օրենսգրքի 204.38-րդ հոդվածը 26.10.11թ. ՀՕ-269-Ն ՀՀ օրենքի ուժով շարադրվել է նոր խմբագրությամբ:

2. Դիմողը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 25.02.2011թ. ՍԴՈ-943 և 15.07.2011թ. ՍԴՈ-984 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, կարծում է, որ եթե չապահովվի հիշյալ որոշումներով սահմանված կարգը, այն է՝ սահմանադրական դատարանի որոշումը, որով օրենքի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող կամ՝ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտվել է դրա սահմանադրավական բովանդակությունը, եւ սահմանադրական դատարանը գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնարանությամբ, ընդիանուր իրավասության դատարաններում գործի վարույթը նորոգելու համար արդյունավետ ազդակ եւ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանման հիմք չհանդիսանա, ապա ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով երաշխավորված անձի՝ «Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը» կլինի ոչ իրական, իսկ սահմանադրական դատարանում սահմանադրավական վեճ նախաձեռնելը կիմաստագրելի:

Վերլուծելով սահմանադրական դատարանի ՍԴՈ-984 որոշման հիման վրա օրենսգրքի 204.38-րդ հոդվածում կատարված օրենսդրական փոփոխությունները՝ դիմոնը եզրահանգում է, որ դրանք հակասում են սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմանն առ այն, որ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է տեղի ունենա ірso facto (փաստի ուժով), որը ենթադրում է, որ վերանայման համար միակ պայման պետք է հանդիսանա դատական ակտում հակասահմանադրական նորմի կիրառման փաստը, եւ որեւէ այլ հանգամանք, պայման, փաստ կամ փաստարկ որպես այլընտրանք չի կարող առաջ քաշվել կամ սահմանվել ի հավելումն նշված փաստի:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող իրավական նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, քանի որ չբացանելով այն հնարավորությունը, երբ գործով նոր կամ նոր երեւան եկած հանգամանքը կարող է ազդած չլինել գործի ելքի վրա, օրենսդիրը, որ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պես բացառիկ դեպք եւ միաժամանակ որպես նոր կամ նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնող անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության երաշխիք, նախատեսել է, որ դատարանը ծանրակշիռ փաստարկների հիման վրա կարող է չփոփոխել դատական ակտի եզրափակիչ մասը: Սակայն, վերջինիս գնահատմամբ, վիճարկվող դրույթով նախատեսված՝ նոր կամ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթով՝ օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով դատական ակտ կայացնելու եւ վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը, ըստ Էռլյան, վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին: Այսինքն՝ երբ վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր կամ նոր երեւան եկած հանգամանքի առկայության փաստը, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն վերանայվող դատական ակտերը: Վերանայման վարույթի արդյունքում տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանած ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով արձանագրված խախտման բնույթը եւ դրա ազդեցությունը գործի ելքի վրա: Այսպիսով, ըստ պատասխանողի, նոր երեւան եկած հանգամանքների, ՀՀ սահմանադրական դատարանի կամ Մարդու իրավունքների եվլուպական դատարանի համապատասխան ակտերի առկայությունն ինքնին չի կարող կանխորոշել գործի ելքը, չի կարող հանգեցնել անձի արդարացման կամ մեղավորության: Այս հարցում պետք է հաշվի առնել արձանագրված խախտման բնույթը եւ համարժեք իրավական միջոցներով ուղղել այն՝ «մինչեւ խախտումը եղած վիճակի վերականգնման» սկզբունքով:

Վերոգրյալի հիման վրա պատասխանող կողմը գտնում է, որ վերանայման վարույթի արդյունքում գնահատելով խախտման բնույթը եւ դրա ազդեցությունը գործի ելքի վրա՝ պետք է կայացվի նոր դատական ակտ՝ օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով: Ուստի, ըստ պատասխանող կողմի, օրենսգրքի վիճարկվող դրույթն այնքանով, որքանով բացառում է անձի սահմանադրական կամ կոնվենցիոն իրավունքները խախտող դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, համապատասխանում է ՀՀ Սահմանադրության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3-րդ, 6-րդ, 18-րդ, 19-րդ, 93-րդ հոդվածների և 101-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներին:

4. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով ճանաչել տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը, վերացնել ՀՀ պաշտպանության նախարարի՝ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի մասին հրամանը և պարտավորեցնել տրամադրելու 10.02.2010թ. թիվ Ե/2010-051 հարցումով տեղեկատվությունը: ՀՀ վարչական դատարանի՝ 23.11.2010թ. վճռով հայցը մերժվել է: Հիշյալ դատական ակտի դեմ ներկայացվել է վերաբննիչ բողոք: ՀՀ վարչական վերաբննիչ դատարանի՝ 16.03.2011թ. որոշմամբ կազմակերպության վերաբննիչ բողոքը մերժվել է, իսկ 23.11.2010թ. վճիռը բողնվել է անփոփոխ: ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2011թ. որոշմամբ դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «զ» ենթակետի, 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա գործով սահմանադրական դատարանը 06.03.2012թ. կայացրել է ՍԴՈ-1010 որոշումը:

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1010 որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 18.05.2011թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ դիմողի բողոքի հիման վրա գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 27.06.2012թ. որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ, որի արդյունքում իր՝ 25.12.2012թ. որոշմամբ մերժել է դիմողի՝ վերը նշված վճռաբեկ բողոքը:

5. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողն առաջադրում է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում հակասահմանադրական ճանաչված իրավական նորմի կիրառմամբ ընդունված դատական ակտի օրինական ուժի մեջ մնալու իրավական հնարավորության խնդիրը: Այսինքն՝ դիմողը վիճարկում է օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասը միայն նոր հանգամանքների, այլ ոչ թե նոր երեւան եկած հանգամանքների հիմքով

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատական ակտի վերանայման վարույթի տեսանկյունից, ուստի առյն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը քննության առարկա է դարձնում միայն նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի տեսանկյունից:

6. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 31 մայիսի 2013թ. ՍԴՈ-1099 որոշման մեջ կրկին անդրադառնալով նոր հանգամանքների ինստիտուտի սահմանադրախրավական բովանդակությանը՝ արձանագրել է, որ. «ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում /մասնավորապես՝ ՍԴՈ-701, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-866, ՍԴՈ-871, ՍԴՈ-935, ՍԴՈ-943, ՍԴՈ-984/, ինչպես նաև սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում անդրադարձել է նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգափրումներին առնչվող հիմնախնդիրներին՝ առաջադրելով այն հայեցակարգային դիրքորոշումը, որ սահմանադրական դատարան դիմելու՝ անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը»:

Սահմանադրական դատարանն իր՝ 15.07.2011թ. ՍԴՈ-984 որոշման 7-րդ կետում արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումները. «... սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

առնելով կիրառված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը»:

ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի ուշադրությունը հրավիրելով սահմանադրական դատարանի՝ 15.07.2011թ. ՍԴՈ-984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների եւ միջազգային իրավական մոտեցումների վրա, ՍԴՈ-1099 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը կրկին արձանագրել է, որ «...նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրակիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովում է խախտված սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը։ Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum)»։

Սահմանադրական դատարանը նույն որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «...սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով «դատական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, եւ դատական ակտի վերանայման հասկացության նշված ընկալումն էլ պետք է կանխտրոշի վերանայման վարույթի բովանդակությունը, դրա խնդիրները եւ դրա շրջանակներում լուծման ենթակա հարցերը։ Ըստ այդմ, դատական ակտի վերանայման վարույթի, նույնն է, թե գործի նորոգման վարույթի շրջանակներում պետք է ձեռնարկվեն արդարադատական այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն գործի վերաբննություն, նոր քննություն, ինչը հնարավոր է միայն հակասահմանադրական նորմ կիրառած՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանման պայմաններում։ Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, եթե ապահովի տվյալ գործի նոր քննություն՝ կիրառված նորմի հակասահմանադրականության եւ կոնվենցիոն իրավունքի խախտման փաստի առկայության պայմաններում՝ հաշվի առնելով նաև սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվլողական դատարանի նոր հանգամանք հանդիսացող դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումները։

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է իրո ֆակտ հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի եւ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը»:

Ի թիվս տվյալ որոշման մեջ արտահայտած ու սույն գործի համար կարեւոր նշանակություն ունեցող՝ նշված եւ մի շարք այլ իրավական դիրքորոշումների, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «Այն դեպքում, եթե դատարանները կխուսափեն օրենքի նորմերի պարզապես ձեւական թվարկումից եւ օրենքի նորմի կիրառումն իրական բովանդակություն կունենա, անխուսափելի կլինի գործն ամբողջությամբ վերանայելու արդյունքում նաև եզրափակիչ մասի բովանդակային վերանայումը»: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ. «... իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուրյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում ժանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ: Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնական է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ եւ «ժանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի եւ դատական համարժեք նախադեպ ստեղծելու խնդիրն է: Նկատի ունենալով, որ այս եզրույթն ամրագրված է նաև այլ հոդվածներում /մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մաս/, ՀՀ Ազգային ժողովը եւ ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով ապահովել տվյալ դրույթի միատեսակ ընկալումն ու կիրառումը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կիակասի իրավունքի գերակայության սկզբունքին եւ իրավական պետության հիմնարար արժեքներին»: Սահմանադրական դատարանը նկատի է առնում այն կարեւոր հանգամանքը, որ փաստարկը «ժանրակշիռ» կարող է լինել, եթե այն ելակետային ու վճռորոշ նշանակություն ունի համարժեք եզրահանգման համար:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7. Նկատի ունենալով, որ ՀՀ սահմանադրական դատարանը, ինչպես նշվեց, բազմից անդրադարձել է նոր հանգամանքների հիմքով գործի քննության ինստիտուտի սահմանադրափակական բովանդակությանը, կարեւոր է համարում նաև 2005թ. սահմանադրական բարեփոխումներից հետո մեր երկրում անհատական դիմումների ներդրման իրավական պրակտիկային անդրադարձ՝ սույն գործով առաջ քաշված խնդիրներին ամրողական ու հստակ պատասխան տալու համար: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից ելնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի ընդունած վերջին տարիների թվով շուրջ 150 որոշումների համակողմանի ուսումնասիրությունից հետեւում է, որ քննած գործերի 92.3 տոկոսի դեպքում պարզապես մերժվել է նոր հանգամանքների հիմքով գործի քննությունը եւ բողոքները վերադարձվել են: Միայն 7.7 տոկոսի դեպքում է նոր հանգամանքների հիմքով բողոքները բավարարվել՝ դրանց քննության ընդունումը մերժելու վերաբերյալ նախկինում կայացված դատական ակտերը վերանայելու գործընթաց սկսելու առումով: Սակայն բոլոր դեպքերում որեւէ գործով վերջնական դատական ակտը չի վերանայվել: Դա այն դեպքում, երբ սույն գործով վեճի առարկա հոդվածով /2-րդ մաս/ հստակ սահմանված է, որ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում միայն ծանրակշիռ փաստարկների մատնանշմանը դատարանը կարող է **վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխել:** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ համատեքստում խոսքը վերաբերում է միայն **վերանայված դատական ակտին, ինչին անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում դատական պրակտիկայում:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ուսումնասիրված որոշումների կեսից ավելին Սահմանադրության գերակայության երաշխավորման առումով խնդրահարույց է եւ ձեւափորել է իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքին ոչ համարժեք իրավակիրառական պրակտիկայի գնահատման տեսանկյունից, առանձին անդրադարձ է անհրաժեշտ: Բանն այն է, որ կոմկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտը համակարգային առումով փոխկապակցված է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտի հետ, որոնց էությունը կայանում է նրանում, որ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա կոնկրետ դատական ակ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տի վերանայման արդյունքում համապատասխան հիմքերի առկայության պարագայում տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործով կայացվում է նոր դատական ակտ, որը տարրերվում է տվյալ գործով նախկինում՝ մինչեւ սահմանադրական դատարանի որոշումը կայացված դատական ակտից: Այս համատեքստում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկ է տարրերակել «նոր հանգամանքների հիմքով վերանայման վարույթի հարուցում» և «նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայում» եզրույթները: Այսպես. նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը տեղի է ունենում նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման բողոքի ընդունելիության հարցը լուծելիս, որի ընթացքում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33, 204.36 և 204.37-րդ հոդվածները, չի կարող գնահատվել դիմողին առնչվող գործով կիրառված հակասահմանադրական նորմի ազդեցությունը դատարանի եզրահանգման վրա: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների ուժով, եթե առկա չեն բողոքը վերադարձնելու հիմքեր, ապա դատական ակտը վերանայող դատարանը պարտավոր է ոչ միայն հարուցել վերանայման վարույթ, այլև դրա արդյունքում բեկանել վերանայվող դատական ակտը, այլապես դատական ակտի հիմքում կշարունակվի մնալ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված կամ սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարրերվող մեկնաբանությամբ կիրառված իրավական նորմը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայմանը, ապա այն վերանայվող դատական ակտի բեկանումից հետո տեղի ունեցող ընթացակարգ է, որի ընթացքում միայն կարող է գնահատվել նոր հանգամանքի ազդեցությունը գործի ելքի վրա, ինչով էլ պայմանավորված է վերանայվող դատական ակտի եզրափակիչ մասը փոփոխելու կամ չփոփոխելու անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում կիսաքարտի կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտների էությունը: Ընդ որում, ինչպես արձանագրված է ՍԴՈ-984 որոշման մեջ, դատական ակտը վերանայող՝ վերաբնիշ և վճռաբեկ դատարանները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով իրավասու են կամ վերանայվող դատական ակտը բեկանել եւ գործն ուղարկել նոր քննության, կամ վերանայվող դատական ակտը բեկանել եւ փոփոխել:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8. ՀՀ սահմանադրական դատարանի վերոքարկյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով քաղաքացիական եւ վարչական գործերով նոր հանգամանքների իրավական ինստիտուտի առնչությամբ ՀՀ դատական պրակտիկայում ստեղծված վիճակին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա է ոչ միայն հակասական իրավակիրառական պրակտիկա, այլև ակնհայտ է, որ շատ դեպքերում նոր հանգամանքների հիմքով գործի նորոգումը մերժվում է այդ ինստիտուտի սահմանադրափական բովանդակությանը ոչ համարժեք փաստարկներով։ Տիպական օրինակ կարող են լինել 2007թ. քննկած գործերը՝ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման հիման վրա նոր հանգամանքների ծագման հիմքով։ Այդ որոշման 3-րդ կետով ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ)։

ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ժամկետ սահմանելու առումով, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը,

բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման շնախատեսելու, հետեւարար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»։

Նման պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանը նոր հանգամանքների հիմքով որոշման վերանայման վարույթի հարուցումը մերժել է՝ գտնելով, որ սահմանադրական դատարանն իր որոշումը չի տարածել «...այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա»։ Ակնհայտ է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի՝ մասնավորապես 10, 12 եւ 13-րդ մասերի պահանջների մեկնաբանության շրջանակներում չեն կարող անտեսվել նույն օրենքի 69-րդ հոդվածի 12 եւ 13-րդ մասերի պահանջները։ Սահմանադրական դատարանի որոշման հետադարձության ինստիտուտն առաջին հերթին վերաբերում է վերացական սահմանադրական վերահսկողությանը, իսկ անհատական դիմումների հիման վրա կոնկրետ սահմանադրական վերահսկողության դատավարական ընթացակար-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գերն ու առանձնահատկությունները սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով: Վերջինիս 11-րդ մասը հղում է կատարում նաեւ օրենքի 68-րդ հոդվածի 6-17-րդ մասերին՝ շեշտելով, որ տվյալ հոդվածով նշված գործերին առնչվող **բոլոր այլ հաճագամանքների** քննության եւ այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառելի են օրենքի 68-րդ հոդվածի նշված մասերի կանոնները: Սակայն, դրանով հանդերձ, անհատական դիմումներով սահմանադրական դատարանի որոշման վերաբերելիության առումով կանոնները հստակ ու իրավական որոշակիության սկզբունքին համապնդ սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12 եւ 13-րդ մասերով: Իրավական երկու ինստիտուտների /սահմանադրական դատարանի որոշման հետադարձության եւ անհատական գանձատի միջոցով սահմանադրական իրավունքների պաշտպանության/ իրավական էության ոչ ճիշտ մեկնարանման արդյունքում սահմանափակվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12 եւ 13-րդ մասերով նախատեսված իրավասությեկտների իրավունքները դատական կարգով պաշտպանելու հնարավորությունը:

Մտահոգիչն այն է, որ հետագայում նույնպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատը տարբեր փաստարկներով դարձյալ մերժել է նոր հանգամանքների հիմքով գործի նորոգումը: Դա վերաբերում է ոչ միայն սահմանադրական դատարանի որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանելու միջոցով որոշման տարածամկետման դեպքերին, այլև որոշման իրապարակման պահից հակասահմանադրական նորմն անվավեր ճանաչելու ուժով նոր հանգամանքի ի հայտ գալուն:

Ընդհուպ հանդիպում են որոշումներ, որոնք պարզապես դատական հայեցողության սահմանների ակնհայտ ոտնահարում են: Օրինակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածում նշված գործերով՝ դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաեւ այն դեպքում, եթե սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող եւ միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով»: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածով սահմանված է, որ «**Նոր հանգամանքները** հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրախրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնարանությամբ»:

Այս դրույթի առաջին պարբերությունը բովանդակային փոփոխության չի ենթարկվել նաեւ 26.10.2011թ. օրենսդրական փոփոխությունների արդյունքում: Ակնհայտ է, որ ՀՀ օրենսդրությունը տվյալ դեպքում **իրավունքի իրացման այլ նախապայման չի պահանջում**: Ավելին, մի շարք երկրներում պետության պարտավորությունն է անձի նկատմամբ հակասահմանադրական նորմ կիրառելու դեպքում նախաձեռնել նրա իրավունքի վերականգնումն ու հետեւանքների հաղթահարումը: ՀՀ դատական պրակտիկայում վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատը հաճախ վերադարձնում է բողոքը՝ պարզապես արձանագրելով, որ «... վճռաբեկ բողոքում չի հիմնավորվել նոր հանգամանքների առկայությունը»: Այնինչ նոր հանգամանքի առկայությունը տվյալ անձի դիմումի հիման վրա կամ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսված սուբյեկտների առնչությամբ, սահմանադրական դատարանի որոշման փաստն է, որով նրանց նկատմամբ կիրառված նորմը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող կամ կիրառվել է այլ մեկնարանությամբ, ինչը, սահմանադրական դատարանի կարծիքով, չի համապատասխանում տվյալ նորմի սահմանադրախրավական բովանդակությանը: Եթե սահմանադրական դատարանը գործն արդեն իսկ ընդունել է քննության եւ համանման որոշում է կայացրել, ապա այդ որոշումը վճռաբեկ դատարանի պալատն իրավասու չէ կասկածի տակ դնել եւ տարարնույթ մոտեցումներով խուսափել դրա կատարումից:

Առանձին դեպքերում ճենական մոտեցումը համեստնում է նրան, որ դատական ակտում մեխանիկորեն վերաբռնվում է դիմողի կողմից թույլ տրված սխալը կամ վրիպակը: Օրինակ, 2012թ. հունվարի 11-ի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԵՄԴ/0644/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում է ՀՀ սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՍԴՈ-897 որոշման հիման վրա նոր հանգանանքների հիմքով նախսկին որոշումը վերանայելու հիմքերի բացակայության մասին եւ բողոքի քննության ընդունումը մերժվում է այն պատճառաբանությամբ, որ «... բողոք բերած անձինք վճռաբեկ բողոքում չեն հիմնավորել նոր հանգանանքի առկայությունը»: Այնինչ սահմանադրական դատարանի հիշյալ համարով որոշումն ընդունվել է 2010թ. հունիսի 22-ին եւ վերաբերում է միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների սահմանադրականությանը:

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական պրակտիկայում անհրաժեշտ տարբերակում պետք է դրվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 եւ 204.33-րդ հոդվածներով նախատեսված իրավապայմանների միջև: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածը նոր երեւան եկած հանգանանքների դեպքում դատական ակտի վերանայման հիմքերի մեջ պարտադիր իրավապայման է դիտարկում նաև այն, որ բողոք ներկայացրած անձը պարտավոր է ապացուցել, որ «...այդ հանգանանքները հայտնի չեն եղել եւ չեն կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգանանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, եւ այդ հանգանանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն»: 204.33-րդ հոդվածը, սակայն, նոր հանգանանքի առկայության հիմնավորման որեւէ իրավապայման չի առաջադրում, բացի ՀՀ սահմանադրական դատարանի եւ Սարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան ակտերի առկայությունից: Դա անհրաժեշտ ու բավարար պայման է գործի նորոգման համար: Այլ հարց է, որ նորոգումից հետո ըստ եռթյան նորոգված գործի քննության շրջանակներում իրավասու դատարանը պետք է որոշի, թե որքանով է Սահմանադրությանը հակասող նորմի կիրառումն ազդել քննության առարկա գործի ելքի վրա եւ ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր իսականական իրավունքները: Դրա փոխարեն պարզապես արգելափակվում է անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքը:

Անընդունելի է նաև այն, որ օրենքի պահանջը կատարելու փոխարեն ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատն առանձին դեպքերում փորձում է «մեկնարանել» սահմա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նադրական դատարանի որոշումները եւ այդ ճանապարհով շրջանցել դրանց պահանջների կատարումը, որպիսի պրակտիկան չի բխում ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև 93-րդ հոդվածի պահանջներից: Նման պրակտիկայի համար, մասնավորապես, հիմք է ծառայել նաև ՀՀ Սահմանադրության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի դրույթների յուրովի մեկնաբանությունը: Ընդհուպ շրջանցելով սահմանադրական դատարանի դրկտրինալ մոտեցումները, արտահայտված նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1010 որոշման մեջ, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատը թիվ ՎԴ/1314/05/10 վարչական գործով 25.12.2012թ. որոշման մեջ գտել է, որ «... վեճը լուծող դատարանները (ընդհանուր իրավասության եւ/կամ մասնագիտացված) որոշակի հանգամանքների ի հայտ գալու ուժով լիազորված են կասեցնելու գործի վարույթը: Նման հանգամանքներից է կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի՝ դատարանի կարծիքով ՀՀ Սահմանադրությանը հակասելը»: Այս իրավաչափի դատողությանը հաջորդում է այն հետեւությունը, համաձայն որի՝ «Կոնկրետ դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը ենթակա է գնահատման դատարանի (գործը քննող դատավոր կամ դատավորների կազմ) կողմից»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը /մասնավորապես՝ 5-րդ մաս/ նախատեսում է, որ դատարանը սահմանադրական դատարան դիմելու համար երկու հիմնավորում պետք է ներկայացնի: Նախ՝ պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առնչությամբ: Երկրորդ՝ հիմնավորի այն հանգամանքը, որ տվյալ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ: Առաջին դեպքում դիրքորոշումը կարող է ձեւավորվել նորմի սահմանադրականության վերաբերյալ դատավորի ինքնուրույն ու համարժեք իրավական վերլուծության արդյունքում: Սակայն դա չի կարող դառնալ դատարնենության առարկա ու դրա ընթացքում՝ «գնահատման» արդյունք եւ Հայաստանի Հանրապետության անունից ընդունվող դատական ակտում ամրագրվի, որ տվյալ նորմը համապատասխանում է կամ չի հակասում Սահմանադրությանը: Դա պարզապես կհակասի ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջներին եւ դատական սահմանադրական վերահսկողության նյութական ու դատավարական նորմերի բովանդակությանը: Կիրառվելիք նորմի սահմանադրականության վերաբերյալ հնարավոր մտահոգության առկայու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյան ու սահմանադրական դատարանի միջոցով դրա փարատման հնարավորության հանգամանքը մեկնարանելով որպես այդ նորմի՝ **Սահմանադրությանը հակասելու հանգամանքի գնահատման իրավասություն**, տեղիք կտրվի ինքնիրավշության՝ անուղղակի ձեւով ստանձնելով սահմանադրական արդարադատության գործառույթ ու ստեղծելով նաև հետագա իրավական շփոթ: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության անունից ընդունված որոշման մեջ վճռաբեկ դատարանը կարող է «գնահատման արդյունքում» իրավական դիրքորոշում արտահայտել, որ տվյալ նորմը համապատասխանում է Սահմանադրությանը, եթե սահմանադրական դատարանը՝ դարձյալ Հայաստանի Հանրապետության անունից ու իր սահմանադրական լիազորությունների ու համարժեք դատավարական ընթացակարգերի շրջանակներում, իրավաչափ ձեւով նույն դրույթը ճանաչում է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Բնականարար, նման դատական պրակտիկա չի կարող ձեւավորվել: Սակայն փաստն այն է, որ Վերջին տարիներին շուրջ 60 գործերով քաղաքացիների դիմումների հիման վրա ՀՀ դատարանների կողմից փաստացի կիրառված օրենքների դրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Դրանցից ոչ մեկի սահմանադրականության վերաբերյալ նորմը կիրառելիս դատարանների մոտ որեւէ մտահոգություն չի առաջացել՝ անգամ եթե առկա են եղել նաև սահմանադրական դատարան դիմելու միջնորդություններ: Սա ինքնին մտահոգիչ հանգամանք է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար պետք է ընկալել ոչ միայն իրավունք, այլեւ պարտականություն: Առանց դրա, մի կողմից՝ նորմի սահմանադրականության վերաբերյալ մտահոգությունը չի կարող փարատվել հայեցողական մոտեցմամբ, որովհետեւ այն պահանջում է «գնահատման» դատավարական համապատասխան ընթացակարգ եւ դրա իրավանացման սահմանադրական լիազորություն, մյուս կողմից՝ մարդկանց իրավունքները պաշտպանելու փոխարեն հնարավոր հակասահմանադրական նորմի կիրառմամբ կլասիտվեն այդ իրավունքները: Դատական պրակտիկան նաև ցույց է տալիս, որ դրանց հետագա վերականգնումը դառնում է ավելի դժվար ու հաճախ անհնարին՝ հանգեցնելով արդարադատության նկատմամբ վստահության կրծստի: Ուստի խնդիրը ոչ միայն նոր հանգամանքների ինստիտուտի գործունակության ու արդյունավետության հետագա քարձրացումն է,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

այլեւ, առաջնորդվելով իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի անշեղ իրացման պահանջով, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետով ՀՀ դատարաններին վերապահված հնարավորության խելամիտ իրացումը: Իսկ դա կարող է երաշխավորվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի սահմանադրահրավական բովանդակության ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում: Վերջինում «գտնում են» արտահայտությունը պետք է ընկալել որպես հայեցողական դիրքորոշում, հիմնավոր կասկածով պայմանավորված՝ դատավորի իրավական վերլուծության արդյունք: Այնինչ «գնահատումը» ենթադրում է համապատասխան դատավարական ընթացակարգ ու դրա իրականացման համարժեք լիազորություն:

10. Սահմանադրական դատարանն էական է համարում նաեւ այն հանգամանքը, որ գործի քննության ընդունման փուլում վճռաբեկ դատարանը հաճախ իրականացնում է գործն ըստ էության լուծելու գործառույթը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությամբ առավել հստակ պետք է սահմանազատվեն վճռաբեկ դատարանի կողմից գործը քննության ընդունելու եւ գործով ըստ էության որոշում կայացնելու դատավարական ընթացակարգերն ու ընդունվող որոշումներին ներկայացվող պահանջները: Անհրաժեշտ հստակեցման կարիք ունի նաեւ «վերջնական դատական ակտ» հասկացությունը: Այն հաճախ շփոքում են վերադաս դատարանի կողմից կայացված ակտի հետ: Եթե քաղաքացին դիմել է վճռաբեկ դատարան եւ վերջինս մերժել է նրա դիմումը քննության ընդունել, դա չի նշանակում, որ այդ որոշումն է վերջնական դատական ակտ, ինչպիսի մեկնաբանության հանդիպում ենք ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի առանձին որոշումներում, ինչը փաստվեց նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ պարզաբանումներում:

Բողոքարկման ինստիտուտի ամբողջական իրացումն անհրաժեշտ է դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու համար: Եթե այդ միջոցներն սպառվում են, ապա ի հայտ է գալիս սահմանադրական դատարան կամ ՄԻԵԴ դիմելու հնարավորությունը: ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը նախատեսում է յուրաքանչյուր անձի համար սահմանադրական դատարան դիմելու երեք իրավապայման:

- երբ առկա է դատարանի վերջնական ակտը,
- սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Սահմանադրական նորմը վերաբերում է վերջնական դատական ակտին, այլ ոչ թե բողոքարկման ընթացքում վերջին ատյանի դատարանի կողմից ընդունված ցանկացած ակտի: Սիամամանակ, ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածը սահմանում է, որ «**Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունուց»: Սահմանադրավական բովանդակությամբ դատարանի վերջնական ակտն այն ակտն է, որը գործն ըստ էության լուծել է, օրինական ձեռու ուժի մեջ է մտել եւ անձի համար առաջացրել է համարժեք իրավական հետեւանք: Նման մոտեցումից է բխում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.11-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունը, համաձայն որի. «Սույն օրենսգրքի իմաստով՝ վերջնական դատական ակտ է համարվում սույն օրենսգրքով սահմանված կարգով առաջին ատյանի դատարանի կայացրած եւ ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, Հայաստանի Հանրապետության վերաբննիշ քաղաքացիական դատարանի կայացրած եւ ուժի մեջ մտած, գործի քննությունը սկսելը եւ շարունակելը բացառող, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտը»:**

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ դատական արակտիկայում առկա շփոթք հաղթահարելու համար համանման ակտերին ներկայացվող պահանջներն առավել հստակ պետք է շարադրվեն օրենսդրության մեջ՝ լիովին համապատասխանեցնելով իրավական որոշակիության սկզբունքին:

11. Քննության առարկա հոդվածի իրավակարգավորման առարկայի վերաբերյալ, ինչպես նշվեց, ՀՀ սահմանադրական դատարանն իր ամբողջական դիրքորոշումն արտահայտել է 2013թ. մայիսի 31-ի UԴՈ-1099 որոշման շրջանակներում: Ելնելով իրավակիրառական պրակտիկայի առկա վիճակից, սահմանադրական դատարանը չի գտնում, որ սույն գործով դիմողի հարցադրումները պայմանավորված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրավական բովանդակությամբ: Հակառակն, այդ հոդվածն իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք է նախատեսում՝ վերանայված դատական ակտի եզրափակիչ մասն անփոփոխիս բողնել միայն այն պարագայում, եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորվում է դա: Սա ինքնին ենթադրում է, որ դա

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պետք է բացառություն լինի՝ պայմանավորված անհերքելի եւ ծանրակշիռ փաստարկներով։ Այս հանգամանքն ընդունվեց նաեւ պատասխանողի կողմից։ Այսուհանդերձ, թերեւս դատական պրակտիկայի համար նորմատիվ պարզաբանման կարիք ունի «ծանրակշիռ փաստարկ» հասկացությունը։ Վերջինս ամրագրված է նաեւ այլ իրավական ակտերում /օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8 եւ 426.9-րդ հոդվածներում, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածում եւ այլն/։ Եթե դատական պրակտիկան համարժեք մոտեցում չի ցուցաբերել այս եզրույթի իրավական բովանդակության առնչությամբ, ապա օրենսդիր մարմինը նույնպես պետք է համապատասխան հետեւություն անի եւ օրենսդրութեան առավել հստակեցնի «ծանրակշիռ փաստարկ» հասկացության իրավական բովանդակությունը, քանի որ վերջինս տվյալ իրավահարաբերություններում վճռորոշ նշանակություն է ձեռք բերում անձանց իրավունքների պաշտպանության եւ դրանց անմիջական գործողության սահմանադրական պահանջի իրականացման հարցում։ Այսուեղ, ինչպես նշվեց, էականն այն է, որ տվյալ փաստարկն օբյեկտիվորեն պետք է կանխսորշիչ նշանակություն ունենա համարժեք եզրահանգման համար։

Փաստ է նաեւ, որ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան հիմնականում շրջանցում է վեճի առարկա հոդվածի պահանջը։ Արդյունքում՝ նոր հանգամանքների իրավական ինստիտուտի կիրառման դատական պրակտիկան մեծ թվով գործերի առնչությամբ ներդաշնակ չէ մարդկանց իրավունքների ապահովման ու պաշտպանության սահմանադրական պահանջներին։ Նման իրավիճակում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայության երաշխավորման, իրավական պետության սահմանադրական սկզբունքին հավատարիմ լինելու եւ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներն անշեղ կատարելու համար առանցքային նշանակություն ունի ՀՀ դատական պրակտիկայում իրավունքի գերակայության սկզբունքի հետեւողական իրացմանը թելադրված՝ իրավամտածողության լուրջ բարեփոխումը եւ ՀՀ սահմանադրական դատարանի արձանագրած վերոնշյալ իրավիճակի հաղթահարումը։ Միայն այդ ճանապարհով է հնարավոր նաեւ երաշխավորել ՀՀ Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Բ Ո Շ Ե Յ.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի մասով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության այն սահմանադրահիրավական բովանդակությամբ, համաձայն որի:

ա/ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto (փաստի ուժով) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի եւ/կամ կոնվենցիոն իրավունքի խախտում քոյլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով դրա օրինական ուժի մեջ բողնելու հնարավորությունը,

բ/ Վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին: Իսկ վերջինիս եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 սեպտեմբերի 2013 թվականի
ՍՊ-1114**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲՎՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԳԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 24-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

24 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյա-
նի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի,
Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմոնի ներկայացուցիչներ Մ. Խաչատրյանի, Լ. Օհանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժո-
ղովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխա-
տակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության
բաժնի գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյանի, նույն բաժնի առա-
ջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՎՏԲ-Հայաստան

«ԱՎԱՍՏԱՎԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ 02.05.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունիսի 3-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք՝ «Կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց քողնված ժամկետի վերականգնումը» վերտառությամբ 24-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Քաղաքացի-պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց քողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել»:

Ընդունվելուց հետո «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում փոփոխություններ եւ լրացումներ չեն կատարվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով ԼԴ4/0031/02/09 քաղաքացիական գործն ըստ հայցի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ընդդեմ Վահե Օհանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, 21.05.2009թ. վճռով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի հայցն ամբողջությամբ բավարարել է եւ 22.06.2009թ. վճիռը մտել է օրինական ուժի մեջ: «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի դիմումի հիման վրա Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը 30.07.2009թ. կատարողական թերթ է տվել:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

04.03.2010թ. վճի վրիպակը, գրասխալը կամ քվարանական սխալն ուղղելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, վերջինս էլ 09.03.2010թ. կայացրել է «Վրիպակն ուղղելու մասին» որոշում: «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց բողնված ժամկետը հարգելի համարելու եւ վրիպակն ուղղված մասով կատարողական թերթ տրամադրելու մասին 22.06.2011թ. ներկայացրած դիմումի հիման վրա Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 07.07.2011թ. որոշմամբ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումը բավարարել է, կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց բողնված ժամկետը վերականգնել է եւ նույն օրը՝ 07.07.2011թ. տրամադրել է կատարողական թերթ:

Վահե Օհանյանի ներկայացուցի վերաբննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանը 17.11.2011թ. որոշել է վերաբննիչ բողոքը բավարարել՝ թեկանելով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց բողնված ժամկետը հարգելի համարելու մասին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.07.2011թ. որոշումը եւ գործն ուղարկել նոր բնոնության: Թեկանելով որոշումը՝ ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանը նշել է, որ «Դատարանը չի պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված դատական նիստի պատշաճ ծանուցումը, այսինքն՝ խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի դրույթները»:

Նշված որոշման հիման վրա Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումը՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց բողնված ժամկետը վերականգնելու պահանջի մասին, իր՝ 05.04.2012թ. որոշմամբ այն մերժել է՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի վկայակոչմամբ՝ նշելով, որ «օրենսդիրը հարգելի ճանաչված պատճառներով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց բողած ժամկետը վերականգնելու հնարավորություն նախատեսել է միայն պահանջատեր քաղաքացու դիմումի հիման վրա, իսկ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն հանդիսանում է իրավաբանական անձ»:

Վերոնշյալ որոշման դեմ ներկայացվել է վերաբննիչ բողոք, ինչը 29.06.2012թ. վարույթ է ընդունվել եւ 05.09.2012թ. որոշմամբ ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վերաքննիչ բողոքը մերժել եւ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 05.04.2012թ. թիվ ԼԴ4/0031/02/09 որոշումը բողել է օրինական ուժի մեջ՝ գտնելով, որ «բողոք թերած անձի այն պատճառաբանությունը, որ դատական ակտի սխալի պատճառով է Բանկը այժմ հայտնվել նման իրավիճակում, Վերաքննիչ դատարանը գտնում է անհիմն, վերաքննիչ բողոքը բավարարելու ոչ բավարար հիմք, նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Վրիպակն ուղղելու մասին» դատարանի որոշումը կայացվել է 09.03.2010 թվականին, մինչեռ Բանկը վրիպակն ուղղված մասով կատարողական թերթ տրամադրելու, միաժամանակ կատարողական թերթը ՀՀ ԴԱՀԿ ծառայություն ներկայացնելու բաց բողնված ժամկետը հարգելի համարելու մասին դիմումը դատարան է ներկայացրել 22.06.2011 թվականին, որը Դատարանը իրավացիորեն մերժել է, միաժամանակ նկատի ունենալով, որ օրենսդիրը հարգելի ճանաչված պատճառներով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց բողած ժամկետը վերականգնելու հնարավորություն նախատեսել է միայն պահանջատեր-քաղաքացու դիմումի հիման վրա, իսկ Բանկը հանդիսանում է իրավաբանական անձ»:

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից 25.10.2012թ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012թ. թիվ ԼԴ4/0031/02/09 քաղաքացիական գործով կայացված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը 31.10.2012թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում՝ վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012թ. որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

3. Դիմողը, նշելով, որ այն իրավունքներն ու ազատությունները, որոնք շնորհված են (վերաբերում են) քաղաքացուն, նույն կերպ կիրառելի են նաև իրավաբանական անձանց համար, եւ որ պահանջատեր կարող է ինել ինչպես քաղաքացին, այնպես էլ իրավաբանական անձը, գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ «քաղաքացի-պահանջատեր» բառակապակցությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 42.1 եւ 14.1-րդ հոդվածների դրույթներին:

Իր պահանջը հիմնավորելու համար դիմողը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի վկայակոչմանը նշում է, որ օրենսդիրը «քաղաքացի» եզրույթի ներքո նկատի է ունեցել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վերլուծելով օրենքի վիճարկվող նորմը՝ դիմողը եզրահանգում է, որ այն պարունակում է օրենսդրական բաց և բացով պայմանավորված իրավակարգավորման իրավական անրոշություն, քանի որ պարզ չէ, թե ինչու է կատարողական թերթի ներկայացման ժամկետի բացքողումը հարգելի համարելու հնարավորությունն ընձեռվել միայն քաղաքացուն։ Այս փաստարկով դիմողը կարծում է, որ օրենքի վիճարկվող դրույթը հակասությամ մեջ է գտնվում նաեւ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների հետ։ Որպես հիմնավորում՝ դիմոցը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը խախտվում են իրավաբանական անձանց (ինչպես նաեւ անհատ ձեռնարկատերերի, օտարերկրյա պետությունների քաղաքացիների եւ իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կամ օտարերկրյա պետության) իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության իրավունքները, իսկ վերջիններիս իրացման երաշխավորվածությունը պայմանավորված է ոչ միայն անհրաժեշտ ինստիտուցիոնալ մեխանիզմներով, այլև անհրաժեշտ իրավական նախադրյալների առկայությամբ, որոնցից մեկն էլ իրավական որոշակիության պահանջներին համապատասխանող իրավական նորմերի առկայությունն է։

4. Պատասխանող կողմը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 09.09.2003թ. «Հարկադիր կատարման մասին» Rec 2003(17) հանձնարարականը, գտնում է, որ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է, այն չի կարող առանձնացվել արդարադատությունից։ Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի եւ չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի են վերացնել միայն սուբյեկտիվ իրավունքներն իրավես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում։

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացմելու ժամկետը բաց թողնելու դեպքում այն պետք է վերականգնվի բացառապես հարգելի պատճառների առկայության դեպքում, որոնք, որպես կանոն, պայմանավորված են լինում պահանջատիրոջ կամքից անկախ հանգամանքներով՝ հիվանդություն, գործուղում, փաստաթղթերի ուշացումով ստանալը եւ այլն, հանգա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մանքներ, որոնք բնորոշ են ֆիզիկական անձանց, իսկ իրավաբանական անձի հնարավորություններն այդ խոչնդոտները հաղթահարելու առումով ավելին են՝ պայմանավորված մարդկային ռեսուրսներով։ Ըստ պատասխանողի՝ նշված հանգամանքները հաշվի առնելու արդյունքում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց բողնված ժամկետը վերականգնելու խնդրանքով դիմելու հնարավորություն ընձեռել միայն ֆիզիկական անձանց։

Միաժամանակ, պատասխանողն արձանագրում է, որ հաշվի առնելով անձանց խախտված իրավունքների լիարժեք պաշտպանության տեսանկյունից դատական ակտերի հարկադիր կատարման կարեւորությունը եւ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետն օրյեկտիվ պատճառներով բաց բողնելու հնարավորությունն առանձին դեպքերում նաև իրավաբանական անձանց պարագայում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ 2013թ. հուլիսի 3-ին շրջանառության մեջ է դրվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվել է օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ։ «Պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց բողնելու դեպքում դատարանը վերականգնում է այն»։

Ամփոփելով վերոնշյալը՝ պատասխանողը կարծիք է հայտնում, որ թեև կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար օրենքով սահմանված է բավարար ժամանակ, այնուամենայնիվ, վիճարկվող նորմի իրավակարգավորման պայմաններում կարող է ամբողջությամբ շապահովվել անձանց խախտված իրավունքների արդյունավետ վերականգնման հնարավորությունը։

5. Սույն գործով բարձրացված սահմանադրահիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկ է բացահայտել դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի տեղը եւ դերը դատական պաշտպանության եւ արդար դատաքննության ինստիտուտների համակարգում, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց բողնված ժամկետի վերա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կանգնման հետ կապված հարաբերությունների կարգավորման տրամաբանությունը: Այսպես. դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ, հակառակ պարագայում կիմաստագրկվեն ոչ միայն պետական, այդ թվում՝ դատական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, այլև ընդհանրապես արդարադատության եւ դատական գործառույթներ իրականացնող այլ մարմինների համակարգի գոյությունը: **Հետեւաբար՝ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի քաղաքատարը եւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ: Այդ է պատճառը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերությամբ օրենսդիրն ամրագրել է, որ տվյալ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալների վճռների եւ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հարկադիր կատարումն ապահովելու պայմանները եւ կարգը, իսկ նոյն հոդվածի 2-րդ պարբերությամբ օրենսդիրը տվյալ օրենքի գործողությունը տարածել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց, օտարեկրյա պետությունների քաղաքացիների եւ իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև դիտարկվող օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ սուբյեկտների վրա, որոնք Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերին համապատասխան հանդես են գալիս որպես կատարողական վարույթի կողմեր: Այսինքն՝ օրենքը համապատասխան սուբյեկտների շրջանակում հստակ ներառել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց:**

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Օրենսդիրը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում ամրագրելով «Ընդհանուր դրույթներ կատարողական թերթի մասին» վերտառությամբ գլուխը, իրավական կարգավորման է ենթարկել կատարողական թերթ տալու, կատարողական թերթ տալու հիմքերի, կատարողական թերթի բովանդակության, դատական ակտի կատարման հետաձգման, տարածմանետման, կատարման եղանակի եւ կարգի փոփոխման, կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետի, վերջինիս վերականգնման, կատարողական թերթի կրկնօրինակ տալու, վճռի կատարման շրջադարձի հետ կապված հարաբերությունները: Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ կատարողական վարույթի կողմերն են՝ **պահանջատերը** եւ պարտապանը, 2-րդ պարբերության համաձայն՝ պահանջատերն այն **քաղաքացին կամ իրավաբանական անձն է**, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որի օգտին կամ ի շահ որի տրվել է կատարողական թերթը:

ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարը եւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր գործի իրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման շրջանակներում պահանջատիրոջը վերապահված իրավունքներն իրենց էությամբ կիրառելի են նաև իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության, համայնքի, օտարերկրյա պետության նկատմամբ:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համահունչ՝ օրենսդիրը դիտարկվող օրենքով սահմանել է պահանջատեր հանդիսացող սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառելով **ոչ միայն քաղաքացուն, այլև իրավաբանական անձին**: Հետեւողական մոտեցում ցուցաբերելով դիտարկվող օրենքի տրամաբանությանը՝ օրենսդիրն օրենքի, մասնավորապես, 22-րդ եւ 25-րդ հոդվածներում նույնպես կիրառել է

«ՀԱՀՍՏԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«պահանջատեր» եզրույթը՝ տարբերակում չդնելով պահանջատեր հանդիսացող սուրյեկտների միջեւ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից բխում է, որ հիշյալ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «պահանջատեր» եզրույթի ներքո անհրաժեշտ է նկատի ունենալ **ֆիզիկական և իրավաբանական անձանց**, այն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերներին, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների քաղաքացիներին և իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև քննության առնվող օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ սուրյեկտների, այն է՝ Հայաստանի Հանրապետությանը, համայնքներին, օտարերկրյա պետությանը:

Անդրադառնալով իրավակիրառական պրակտիկային՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող դրույթի ձեւակերպման ընկալումը եւ մեկնաբանությունն իրավակիրառ պրակտիկայում հանգեցրել է նրան, որ էապես նեղացվել է ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական կարգավորման շրջանակը:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ իրավունքների ցանկացած սահմանափակում չի կարող հանգեցնել դրանց արգելափակմանը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի պահանջներով սահմանադրական դատարանը նաև իրավաբանական անձանց դիմումների հիման վրա բազմաթիվ գործեր է ընդունել քննության՝ ճանաչելով նրանց՝ դատարանի մատչելիության իրավունքը: Այդ իրավունքն ուղղակիորեն ամրագրված է նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի վերնագրում եւ այդ հոդվածի բոլոր դրույթներում, որոնցով սահմանվել է, որ սահմանադրական դատարան դիմու սուրյեկտ է ֆիզիկական անձանց հետ մեկտեղ ճանաչվում նաև իրավաբանական անձը: Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով չի կարող արգելափակվել իրավաբանական անձանց համար դատարանի մատչելիությունը կամ արդար դատաքննության իրավունքը:

6. Միեւնույն ժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է այն հարցի պարզաբանության համար՝ ուղարկելով դատարանի մատչելիությունը կամ արդար դատաքննության իրավունքը:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նումը, թե արդյո՞ք դատարանի իրավունքն է ոչ միայն կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց քողնված ժամկետի պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքի հաստատումը, այլև բաց քողնված ժամկետը հարգելի ճանաչելու պարագայում նաև բաց քողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը։ Այսպես. օրենքը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց քողնված ժամկետը վերականգնելու իրավունքը տվել է դատարանին, ինչն իրավաչափ է։ Դատարանը, քննելով դիմումը, անդրադառնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչելու նպատակով պահանջատիրոջ ներկայացրած պատճառների հիմնավորվածությանը։ Այսինքն՝ դատական նիստ իրավիրելու մասին օրենքի պահանջի տրամաբանությունը պահանջատիրոջ կողմից դատարան ներկայացված պատճառները հարգելի լինելու հանգամանքի մասին դատարանի կողմից պատճառաբանված զնահատական տալն է։ Հետեւարար, այն պարագայում, եթե դատարանը հարգելի է համարում ներկայացված պատճառները, ապա վերականգնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց քողնված ժամկետը։ Մինչդեռ վիճարկվող նորմում օրենսդիրն օգտագործել է «դատարանը կարող է» հասկացությունը, այսինքն՝ դատարանի հայեցողությանն է բողել դատարանի կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց քողնված ժամկետը հարգելի ճանաչելու հիմքում ընկած պատճառները հարգելի ճանաչելուց հետո բաց քողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը։ Վերը նշվածից բխում է, որ վիճարկվող հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է հայեցողական լիազորությամբ] ժամկետների բացքողումը հարգելի ճանաչելուց բացի, **վերականգնել կամ չվերականգնել ժամկետների բացքողումը**։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավունքի լիաժեք իրացումը կախվածության մեջ է դրվում դատական հայեցողությունից՝ ներկայացված պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքից զատ նաև բաց քողնված ժամկետի վերականգնման հարցի լուծման առումով, սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված դատական հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խարարվի այլոց իրավունքների եւ ազատությունների, ներառյալ դրանց պաշտպանության իրավունքի էությունը կամ անհարկի սահմանափակվի դրանց իրացումը։

Դատական հայեցողության վերաբերյալ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում արտահայտել է իրավական դիրքուժումներ (ՍԴՈ-996, ՍԴՈ-997): Մասնավորապես, 18.10.2011թ.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՍԴՈ-996 որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ՝ «... Ինչ վերաբերում է դատական հայեցողությանը, ապա այն ունի իր սահմանները եւ չի կարող փոխել իրավանորմի բնույթը կամ քննարկման առարկա դարձնել դրա նպատակահարմարության խնդիրը: Դատական հայեցողությունն ընտրություն կատարելու իրավասություն է] այնպիսի հնարավոր տարբերակների միջեւ, որոնք բոլորն եւ օրինական են»: Սույն գործով սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավանորմի դեպքում պետք է ապահովվի հայեցողական լիազորության իրավաչափի եւ ոչ կամայական իրականացումը, այն պետք է լինի հստակ, միակերպ ընկալելի իրավահարարերության կողմերի համար:

Միաժամանակ սահմանադրական դատարանն ընդունում է ի գիտություն, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ 2013թ. հուլիսի 3-ին շրջանառության մեջ է դրվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվել է օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ. «**Պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց բողնելու դեպքում դատարանը վերականգնում է այն»:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական **դատարանը Ո Բ Ո Շ Ե Յ.**

1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ՝ սահմանադրական դատարանի կողմից դրա սահմանադրախրավական բովանդակության բացահայտման հիման վրա ներկայացված հետեւյալ մեկնաբանությամբ. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «քաղաքացի-պահանջատիրոջ» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պետք է մեկնաբանել եւ կիրառել ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրախրավական բովանդակությանը համահունչ՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է նաև իրավաբանական անձանց, քանի որ այն իր էությանը կիրառելի է վերջիններիս նկատմամբ:

2. Դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**24 սեպտեմբերի 2013 թվականի
ՍՊԸ-1115**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՔԻՃՆԵՎՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀՐԱԶԵՆԻ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ, ՊԱՅԹՈՒՑԻԿ
ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՍԱՐՔԵՐԻ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՊՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ
ԱԽԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ ՀԱՄԱՎՅԱԼՎԳՐՈՒՄ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ)
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

24 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Հ. Հովհաննյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դրնաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի նոյեմբերի 14-ին Զիշնեում ստորագրված՝ Հրազենի, ուազմամթերքի, պայթուցիկ նյութերի եւ պայթուցիկ սարքերի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայթարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրում (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի հուլիսի 10-ին սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հրազենի, ուազմամթերքի, պայթուցիկ նյութերի եւ պայթուցիկ սարքերի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայթարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2008 թվականի նոյեմբերի 14-ին՝ Զիշնեում:

Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագիրն ստորագրել է վերապահումով, ըստ որի՝ Համաձայնագրի 16-րդ հոդվածն ընդունվում է հետևյալ խմբագրությամբ. «Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով եւ դրա անբաժանելի մասն է»:

2. Համաձայնագրով Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր) համագործակցությունն իրականացնելու են՝ ա) Կողմերի համագործակցության իրավական-պայմանագրային հենքի կատարելագործման եւ հրազենի անօրինական պատրաստման շրջանառության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դեմ պայքարի ոլորտում Կողմերի պետությունների օրենսդրության ներդաշնակեցմանը աջակցության, բ) հրազենի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայքարի համաձայնեցված ռազմավարության ու համատեղ միջոցների մշակման, գ) հրազենի անօրինական պատրաստման եւ շրջանառության հակազդման բնագավառում իրավասու մարմինների փոխգործակցության մեխանիզմների համակարգման եւ կատարելագործման, դ) հրազենի անօրինական պատրաստմանը եւ շրջանառությանը մասնակից անդրազգային հանցավոր խնդերի, դրանց առաջնորդների եւ մասնակիցների մասին տվյալների համատեղ բանկի ստեղծման, ե) հրազենի անօրինական պատրաստման եւ շրջանառության հակազդման հարցերի հետ կապված միջազգային կազմակերպություններում եւ միջազգային փորումներում փոխգործակցության եւ զ) հրազենի անօրինական պատրաստման եւ շրջանառության կանխման ուղղությամբ համատեղ եւ/կամ համաձայնեցված միջոցառումների անցկացման ուղղություններով:

3. Համաձայնագրով Կողմերը համագործակցությունն իրականացնելու են՝ 1) տեղեկատվության փոխանակման, 2) օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման վերաբերյալ հարցումների կատարման, 3) համատեղ եւ/կամ համակարգված՝ պրոֆիլակտիկ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ծրագրման եւ իրականացման, այդ թվում՝ վերահսկվող մատակարարման մեթոդի օգտագործմամբ, 4) աշխատանքային փորձի փոխանակման, աշխատանքային հանդիպումների, խորհրդատվությունների, խորհրդակցությունների, գործնական կոնֆերանսների եւ սեմինարների անցկացման, 5) կաղընդի պատրաստման եւ մասնագետների որակավորման բարձրացման գործում աջակցության, 6) փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերով համատեղ գիտական հետազոտությունների անցկացման, 7) օրենսդրական եւ այլ նորմատիվ իրավական ակտերի, գիտական հետազոտությունների արդյունքների եւ մեթոդական հանձնարարականների փոխանակման ձեւերով:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ հիմնական պարտավորությունները.

ա) Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջոցով Կողմերի հետ իրականացնել համագործակցություն գենքի անօրինական պատրաստման եւ շրջանառության հետ կապված հանցագոր-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժուրիունների կանխարգելման, հայտնաբերման, խափանման եւ բացահայտման գործում,

բ) Կողմերի հետ համագործակցությունն իրականացնել Համաձայնագրի 3-րդ եւ 4-րդ հոդվածներում սահմանված ուղղություններով եւ ձեւըրով,

գ) փոխադարձ պայմանավորվածությունների հիման վրա օգտագործել վերահսկվող մատակարարման մեթոդը հրազենի անօրինական պատրաստման եւ շրջանառության հետ կապված հանցագործությունները խափանելու եւ բացահայտելու, ինչպես նաև դրանց մասնակից անձանց հայտնաբերելու նպատակով,

դ) Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացնել աջակցություն ցուցաբերելու մասին հայցի հիման վրա, ինչպես նաև տեղեկատվություն տրամադրելու միջոցով,

ե) որպես հայցվող Կողմ՝ ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հայցը կատարի հնարավորին չափ սեղմ ժամկետում, բայց առավելագույնը՝ հայցը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում՝ բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման մասին հայցերի կատարման, եթե Կողմերի միջեւ այլ պայմանավորվածություն չկա, եւ այդ մասին տեղեկացնի հայցող Կողմի պետության իրավասու մարմնին,

զ) ապահովել, որպեսզի հայցվող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն անմիջապես ծանուցի հայցող Կողմի պետության իրավասու մարմնին հայցի կատարմանը խոչընդոտող կամ կատարումը զգալիորեն ուշացնող հանգամանքների մասին, իսկ եթե հայցի կատարումը հայցն ստացած մարմնի իրավասության մեջ չէ, ապա երաշխավորել, որ նա կփոխանցի հայցը Հայաստանի Հանրապետության մեկ այլ մարմնի, որն իրավասու է այն կատարելու, եւ այդ մասին անմիջապես կտեղեկացնի հայցող Կողմի իրավասու մարմնին,

է) ապահովել, որպեսզի հայցի կատարման ամբողջական կամ մասնակի մերժման կամ հետաձգման մասին հայցվող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը ծանուցի հայցող Կողմի պետության իրավասու մարմնին՝ նշելով մերժման կամ հետաձգման պատճառները,

ը) ապահովել Համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկատվության եւ փաստաթղթերի պաշտպանությունն ու պահպանվածությունը,

թ) երաշխավորել, որ Համաձայնագրի հիման վրա ստացված տեղեկատվությունը կամ հայցի կատարման արդյունքները, առանց դրանք

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տրամադրող Կողմի գրավոր համաձայնության, չեն օգտագործվի այլ նպատակներով, քան այն նպատակներն են, որոնց համար դրանք հայցվել կամ տրամադրվել են, իսկ տեղեկատվությունը եւ փաստաթղթերը, որոնք Համաձայնագրի հիման վրա ստացվել է մյուս Կողմից, չփոխանցել երրորդ կողմի առանց դրանք տրամադրած Կողմի նախնական գրավոր համաձայնության,

Ժ) սույն Համաձայնագրի իրազորման հետ կապված ծախսերն իրականացնել ինքնուրույն, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցված:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրի մյուս մասնակիցների հետ մեկտեղ Համաձայնագրի 9-րդ հոդվածում սահմանված տեղեկատվության պաշտպանության ապահովման պարտավորությունը շարունակելու է կրել նույնիսկ Համաձայնագրի գործողության դադարեցումից կամ դրանից դուրս գալուց հետո:

6. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ, իրականացնելով ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված լիազորությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների հետագա կատարման հուսալիությունն առավելացնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը միաժամանակ նշում է, որ քննության առարկա Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ընդհանուր բնույթը եւ, միաժամանակ, հրագենի, ռազմանքերքի, պայքուցիկ նյութերի եւ պայքուցիկ սարքերի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայքարում միջազգային համագործակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության մասնակցությունը պահանջում են Համաձայնագրի կատարման նկատմամբ վերահսկողության հստակ եւ անընդհատ իրականացվող մեխանիզմ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. 2008 թվականի նոյեմբերի 14-ին Զիշնելում ստորագրված՝ Հրազնի, ռազմամթերքի, պայքուցիկ նյութերի եւ պայքուցիկ սարքերի անօրինական պատրաստման եւ շրջանառության դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրում (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**24 սեպտեմբերի 2013 թվականի
ՍՊԸ-1116**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱծ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԱՅԻՆ ԲԱՆԿԻ
ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ-
ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱծ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

24 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թոփուղյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ, 38-րդ և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի մայիսի 2-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երեւանի մետրոպոլիտենի վե-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բակառուցում-երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 09.08.2013թ.:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով պայմանագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ «Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցում – երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2013թ. մայիսի 2-ին:

Պայմանագրի նպատակն է՝ տրամադրել Հայաստանի Հանրապետությանը 5.000.000 եվրո գումարի չափով վարկ՝ «Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցում – երկրորդ փուլ» ծրագիրը ֆինանսավորելու համար:

Պայմանագիրն ունի 4 առդիր՝ Առդիր Ա. «Տեխնիկական նկարագիր», «Քանակ ներկայացվելիք՝ Ծրագրի վերաբերյալ տեղեկադրվություններ եւ փոփոխություններ», Առդիր Բ. «EURIBOR-ի սահմանումը», Առդիր Գ. «Վարկառուի համար չեւարդրերը», Առդիր Դ. «Վարկառուի կողմից դրամադրվող հավասարագրի չեւլ» եւ երկու հավելված: Դեկլարատիվ դրույթները, առդիրները կազմում են Պայմանագրի մասը: Հավելվածները ներկայացվում են Պայմանագրին կից:

II Փուլում իրականացվելիք վերականգնողական աշխատանքի նպատակն է Երեւան քաղաքի մետրոպոլիտենի բունելների ջրի ներհոսքի զգալի նվազեցումը, բունելների վիճակի բարելավումը, տեխնիկական սպասարկելիության բարձրացումը եւ դրանց համար երկարաժամկետ ծառայության ապահովումը:

III Փուլը ներառում է մետրոյի բունելների ջրի ներհոսքի խնդրի լուծումը, ինչպես նաև գծային տնտեսության եւ անվտանգության լրացուցիչ բարելավումներ, վագոնների վերանորոգում ու արդիականացում:

«ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. Պայմանագրով Եվրոպական ներդրումային բանկը (այսուհետ՝ Բանկ; Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է հինգ միլիոն (5.000.000: եվրո գումարի չափով վարկ: Ծրագրի ավարտման ամսաթիվը 2016թ. վերջն է, իսկ Միջոցների ստացման վերջնաժամկետը նշանակված է 2016 թվականի ապրիլի 18-ը: Հատկացման եւ վճարման արժույթը եվրոն է:

Բանկի կողմից Վարկը հատկացվում է մինչեւ հինգ տրանշ ձեւով՝ Երկրորդ փուլի իրականացման առաջընթացի համաձայն: Յուրաքանչյուր տրանշի գումարը, եթե այն չի համարվում վարկի օգտագործման մաս, կազմում է 1.000.000 (մեկ միլիոն: եվրո:

3. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները:

- ոչ ուշ, քան Հատկացման սահմանված ամսաթվից 15 (տասնինգ) օր առաջ (IBAN ծածկագրով կամ տեղական բանկային պրակտիկայում ընդունված համապատասխան ձեւաչափով) Բանկին գրավոր տեղեկացնել ԵՆՔ փոխառության հաշվի մասին եւ ընդունել, որ այդ հաշվին կատարվող վճարումները կազմում են Պայմանագրով նախատեսված հատկացումները, կարծես վճարումները կատարվել են ՀՀ-ի սեփական բանկային հաշվին,
- Պայմանագրի ներքո տրանշները ստանալու համար՝ Հատկացման սահմանված ամսաթվից առաջ 7-րդ աշխատանքային օրը կամ դրանից շուտ, Բանկին ներկայացնել Բանկի պահանջները բավարարող ձեւով եւ բովանդակությամբ (բացառապես նրա հայցողությամբ), Պայմանագրի 1.04.Ա, 1.04.Բ եւ 1.04.Գ հոդվածներում նշված փաստաթղթերը կամ հաստատումները,
- կանխավճարի հատուցման իրավիճակի կամ Պայմանագրի 10.01 հոդվածով նախատեսված իրավիճակի առաջացման պատճառով Բանկի կողմից Ընդունված տրանշը կասեցնելու դեպքում Բանկին վճարել հետաձգման փոխհատուցում, որը հաշվարկվում է կասեցված հատկացման գումարի հիման վրա,
- Պայմանագրի 1.06.Ա հոդվածին համապատասխան Ֆիքսված տոկոսադրույքով տրանշը, որը Հաստատված տրանշ է, ՀՀ-ի կողմից չեղյալ հայտարարման պարագայում, փոխհատուցել Բանկին Պայմանագրի 4.02Բ հոդվածով սահմանված կարգով,
- կատարել տոկոսի վճարումը մասերով ֆիքսված տոկոսադրույքով յուրաքանչյուր տրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ ֆիքսված

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով, Հատկացման առաջարկում նշված համապատասխան Վճարման ամսաթվերին՝ սկսած տրանշի հատկացման օրվան հաջորդող առաջին Վճարման ամսաթվից,

- կատարել տոկոսի վճարումը մասերով Լողացող տոկոսադրույքով յուրաքանչյուր տրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ Լողացող տոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով, Հատկացման առաջարկում նշված համապատասխան Վճարման ամսաթվերին՝ սկսած տրանշի հատկացման օրվան հաջորդող առաջին Վճարման ամսաթվից,
- չխախտելով Պայմանագրի 10-րդ հոդվածը եւ բացառություն կատարելով 3.01-ին հոդվածից՝ Պայմանագրի պայմանների ներքո վճարվելիք ցանկացած ժամկետանց գումարի դիմաց վճարել տոկոսներ վճարման ենթակա ամսաթվից մինչեւ վճարման ամսաթվը, տարեկան տոկոսադրույքով, որը համարժեք է EURIBOR + 2% (200 բազիսային կետ), եւ ենթակա են վճարման Բանկի պահանջագրի համաձայն,
- ֆիքսված տոկոսադրույքով տրանշի ներքո որեւէ ուշացած գումարի համար ցանկացած տոկոս վճարել տարեկան տոկոսադրույքով, այսինքն՝ Պայմանագրի 3.01.Ա հոդվածում նշված տոկոսադրույքը՝ գումարած 0.25% (25 բազիսային կետ), եթե այդ տարեկան տոկոսադրույքը ցանկացած տվյալ ժամանակահատվածի համար գերազանցում է Պայմանագրի 3.02 հոդվածի 1-ին պարբերությունում նշված տոկոսադրույքը,
- ֆիքսված տոկոսադրույքով տրանշը նախօրոք վճարելու պարագայում՝ վճարել Կանխավճարի փոխհատուցում Կանխավճարի ամսաթվին,
- հնարավորինս սեղմ ժամկետներում Բանկին տեղեկացնել ՀՀ-ի կամ Շահագործողի մասով Օրենքի փոփոխության իրավիճակ առաջանալու կամ այդպիսի իրավիճակ առաջանալու հավանականության մասին,
- եթե Ծրագրի հետ կապված ընդհանուր ծախսը գերազանցում է 3-րդ Դեկլարատիվ դրույթում նշված գումարի չափը, ապա առանց Բանկին դիմելու, ձեռք բերել միջոցներ՝ Ծրագրի հավելյալ ծախսերը վճարելու համար, որպեսզի Ծրագրին ավարտին հասցվի Տեխնիկական նկարագրին համապատասխան եւ Հավելյալ ծախսեր վճարելու վերաբերյալ ծրագրերը անհապաղ ներկայացնել Բանկ,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ապահովել, որպեսզի ՀՀ-ի վճարման պարտավորությունները Պայմանագրի շրջանակներում դասակարգվեն բոլոր ներկա և ապագա՝ չապահովված ու չստորակարգված այլ պարտավորությունների վճարման իրավունքին հավասար առաջնահերթությամբ՝ ՀՀ-ի ցանկացած Պարտքային փաստաթղթի ներքո,
- Բանկի կողմից գրավոր պահանջ ներկայացվելու դեպքում՝ համաձայն Պայմանագրի 10-րդ Հոդվածում սահմանված պարտավորությունների, անմիջապես հետ վճարել Փոխառությունը ամբողջությամբ կամ մասամբ՝ Պայմանագրի ներքո կուտակված տոկոսների կամ այլ չվճարված գումարների հետ միասին եւ այլն:

4. Պայմանագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ «Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցում» 30 մլն եվրո ընդհանուր արժողությամբ փաթեթային ծրագիրը բաղկացած է 2 փուլից՝ յուրաքանչյուրը՝ 15 մլն եվրո։ «Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցում - առաջին փուլ»-ի շրջանակներում 2010 թվականի մարտի 10-ին կնքվել է 15 մլն եվրո ընդհանուր արժողությամբ սինդիկացված վարկային համաձայնագիր, որից 5 մլն եվրոն՝ որպես դրամաշնորհ, տրամադրել է Եվրոպական Միության Հարեւանության Ներդրումային գործիք-NIF-ը եւ 5-ական մլն եվրոյի չափով վարկեր տրամադրել են Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (այսուհետ՝ ՎԶԵԲ։ Եւ ԵՆԲ-ն։ Ըստ ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրության՝ գումարն ուղղվել է Երեւան քաղաքի մետրոյի համակարգի վերակառուցման եւ մատուցող ծառայությունների անվտանգության բարձրացման նպատակով իրականացվող գերակա կապիտալ ներդրումների ֆինանսավորմանը։ Այս ծրագրի շրջանակներում մասնավորապես բարմացվել է մետրոյի շարժակազմը, նորոգվել է ռելսերի եւ էլեկտրամատակարարման մաշված համակարգը, գնվել է տեխնիկական սպասարկում իրականացնող դրեզինա եւ փոխվել են պոմպակայանները, որոնց միջոցով դուրս է մղվում բունել ներքափանցող ջուրը։ Ներդրումների արդյունքում ապահովվել են մետրոպոլիտենի շահագործման բարելավված անվտանգությունը եւ ուղեգծերի հարմարավետությունը։ Ծրագրի առաջին

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

փուլով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ իրականացվել են:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2013 թվականի մայիսի 2-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երեւանի մետրոպոլիտենի վերակառուցում-երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**24 սեպտեմբերի 2013 թվականի
ՍՊԸ-1117**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅԹԱՆ

ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՊԱԿԱՆ ՔԱՆԿԻ ՄԻՋԵՎ՝

«ԵՐԵՎԱՆԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ»

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՎՅԱՎՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ՝

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

24 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող, գեկուցող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի հունիսի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ «Երեւանի ջրա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մատակարարման բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 24 օգոստոսի 2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով փոխառության համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջև «Երեւանի ջրամատակարարման բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագիրն ստորագրվել է 2013թ. հուլիսի 19-ին՝ ջրամատակարարման ցանցը վերակառուցելու, ճնշման պոմպերը եւ բնակարաններում առանձին միացումները փոխարինելու միջոցով Երեւան քաղաքի ջրամատակարարումը բարելավելու նախատակով:

Համաձայնագրի I հոդվածի 1.01 բաժնի ա) ենթակետի համաձայն՝ 2012թ. դեկտեմբերի 1-ով թվագրված Ստանդարտ պայմանների բոլոր դրույթները ներառվում ու դառնում են կիրառելի Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ այնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ սահմանվեին Համաձայնագրում:

Համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում նաեւ երկու առդիրները եւ 2-րդ Առդիրի հավելումը. Առդիր 1՝ «Ծրագրի նկարագրությունը», Առդիր 2՝ «Կատեգորիաներ եւ փոխառության միջոցների օգտագործում»:

Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված՝ Ծրագրի իրականացման նպատակով Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը Հայաստանի Հանրապետությանը՝ Համաձայնագրում սահմանված կամ վկայակոչված պայմաններով, տրամադրում է 7 միլիոն (7,000,000) ԱՄՆ դոլար գումար:

Հանձնառության վճարի դրույթը տարեկան 0.5 տոկոս է: Վարկի փակման ժամկետը 2028թ. ապրիլի 16-ն է:

ՀԱՅՍՏԱՆԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, ի քիչս այլնի, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի փոխառության օգտագործման նվազագույն գումարը լինի 50.000 ԱՄՆ դոլար,
- ապահովել, որպեսզի կանխավճարի նվազագույն գումարը լինի 500.000 ԱՄՆ դոլար,
- ապահովել, որպեսզի չեղյալ հայտարարման նվազագույն գումարը լինի 500.000.000 ԱՄՆ դոլար,
- ապահովել տոկոսագումարների վճարումը յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին,
- ապահովել Փոխառության մարումը քսանչորս հավասար (կամ հնարավորինս հավասար) կիսամյակային վճարումների միջոցով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին, Փոխառության առաջին մարումը կատարել տոկոսագումարների վճարման ամսաթվին, որն ընկնում է Համաձայնագրի ստորագրման երրորդ տարեդարձին կամ դրանից անմիջապես հետո,
- ողջ Փոխառության կամ Փոխառության գումարի այդ պահի դրությամբ վճարման ենթակա չափի համար Փոփոխվող տոկոսադրույթի վճարման փոխարեն Ֆիքսված տոկոսադրույթի վճարումը Փոխառության այդ մասի համար ընտրելու դեպքում՝ Ստանդարտ պայմանների բաժին 3.04. «զ» կետի, Համաձայնագրի բաժին 2.02.-ի «ը» կետի նպատակների համաձայն՝ ապահովել, որպեսզի Փոխառության մայր գումարը, որը փոխարկվում է Փոփոխվող տոկոսադրույթից Ֆիքսված տոկոսադրույթի, չինի 1.500.000 ԱՄՆ դոլարից պակաս,
- տրամադրել Փոխառության միջոցները Բանկի համար ընդունելի պայմաններով, Ծրագրի իրականացման բացառիկ նպատակով, Համաձայնագրի 2.03 բաժնում նկարագրված նպատակներով,
- Ֆինանսական համաձայնագրերի եւ Ծրագրի փաստաթղթերի շրջանակներում, որոնց Կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, իր իրավունքները կիրառել այնպես, որ պաշտպանի իր եւ Բանկի շահերը, բավարարի այդպիսի համաձայնագրերի դրույթները եւ իրականացնի այն նպատակները, որոնց համար տրամադրվել է Փոխառությունը,
- չփոխանցել, չփոփոխել, չեղյալ չհայտարարել եւ չհրաժարվել որեւէ Ծրագրի փաստաթղթի, որի Կողմ է հանդիսանում Հայա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- տանի Հանրապետությունը, որեւէ դրույթից, բացի Բանկի կողմից նախատեսված դեպքերից,
- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը, որպեսզի Օպերատորն ու Քաղաքապետարանը կատարեն իրենց բոլոր համապատասխան պարտականությունները Ծրագրի համաձայնագրերի ներքո, որոնց Կողմ են նրանք հանդիսանում, ներառյալ, առանց սահմանափակումների, Օպերատորի՝ Համաձայնագրի հոդված III, 3.01 բաժնի «դ» կետով նախատեսված պարտականությունները,
 - ձեռնարկել եւ պահանջել, որ իր վարչություններն ու ստորաբաժանումները ձեռնարկեն բոլոր օրենսդրական, կարգավորող կամ այլ գործողությունները կամ չնոռանան ձեռնարկել այդպիսի գործողություններ, որոնք պահանջվում են Ֆինանսական համաձայնագրերի եւ Ծրագրի փաստաթղթերի եւ Օպերատորի հետ որեւէ համաձայնագրի դրույթները գործողության մեջ դնելու համար, ներառյալ, սակայն չսահմանափակվելով որեւէ գործողությամբ, որն անհրաժեշտ է, որ Օպերատորին եւ Քաղաքապետարանին հնարավորություն տրվի կատարելու իրենց համապատասխան՝ ֆինանսական եւ այլ պարտավորությունները՝ նախատեսված ֆինանսական համաձայնագրերի եւ Ծրագրի փաստաթղթերի շրջանակներով,
 - ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի Հայաստանի Հանրապետության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվող որեւէ պետական սուբյեկտ, որը Օպերատորի հաճախորդ է հանդիսանում, բարեխսդորեն Օպերատորին վճարի ջրամատակարարման եւ կեղտաջրերի հեռացման ծառայությունների դիմաց վճարման ենթակա բոլոր գումարները ժամանակին, կանխիկով եւ ամբողջությամբ,
 - կատարել եւ ապահովել, որպեսզի Ջրային տնտեսության պետական կոմիտեն եւ/կամ որեւէ այլ կողմ, որին Հայաստանի Հանրապետությունը լիազորել է, կատարի իր բոլոր պարտավորությունները Վարձակալության պայմանագրի եւ որեւէ այլ համաձայնագրի ներքո, որի համաձայն Օպերատորը համաձայնում է շահագործել Գույքը Հայաստանի Հանրապետության անունից: Բանկի անհամաձայնության դեպքում չձեռնարկել կամ չհամաձայնել որեւէ գործողության եւ ապահովել, որպեսզի Ջրային տնտեսության պետական կոմիտեն եւ/կամ որեւէ այլ կողմ, որը լիազորված է Հայաստանի Հանրապետության անունից, չձեռնարկի կամ չհամաձայնի որեւէ գործողության, որի արդյունքում կփոփոխվի, չեղ-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- յալ կիայտարարվի, կփոխանցվի Օպերատորի հետ որեւէ համաձայնագիր կամ դրա որեւէ դրույթ կամ դրանից հրաժարում,
- վարձակալության պայմանագրի ժամկետի սպառման կապակցությամբ անցկացնել մրցույթ, որպեսզի երրորդ կողմը շահագործի Գույքը Հայաստանի Հանրապետության անունից, Բանկի համար խելամիտ եւ բավարար պայմաններով,
 - դիմել Բանկին՝ նախապես գրավոր համաձայնություն ստանալու համար՝ նախքան Վարձակալության պայմանագրի կամ դրան հաջորդող որեւէ համաձայնագրի կամ համաձայնագրերի որեւէ փոփոխություն, դադարեցում կամ վերսկսում իրականացնելը, համաձայն որոնց երրորդ կողմը շահագործելու է Գույքը, Հայաստանի Հանրապետության անունից, կամ նախքան Գույքի շահագործման վերաբերյալ որեւէ նոր համաձայնագիր կամ համաձայնագրեր կնքելը հաջորդ օպերատորի հետ, որի համաձայնությունը չպետք է առանց պատճառի ուշացվի՝ Համաձայնագրի հոդված III, 3.01 բաժնի «ք» կետով նախատեսված դեպքերից ելնելով,
 - չվաճառել, չփոխանցել, վարձակալությամբ չտալ եւ այլ կերպով չտնօրինել եւ ապահովել, որպեսզի Զրային տնտեսության պետական կոմիտեն եւ/կամ որեւէ այլ կողմ, որին Հայաստանի Հանրապետությունը լիազորել է, չվաճառի, չփոխանցի, վարձակալությամբ չհանձնի կամ այլ կերպով չտնօրինի Օպերատորի կողմից շահագործվող ակտիվներն ամբողջությամբ կամ զգալի մասով, որոնք կարեւոր կամ ցանկալի են Օպերատորի հիմնական գործունեության բնականոն ընթացքի համար, ներառյալ Գույքը եւ/կամ Ծրագրի իրականացումը,
 - տրամադրել անհրաժեշտ միջոցներ, Համաձայնագրի, Ծրագրի համաձայնագրերի եւ Տեխնիկական համագործակցության հիմնադրամի միջոցներով գնվելիք ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների ԱՍՀ-ն եւ այլ սուլքերը ֆինանսավորելու համար,
 - ապահովել, որպեսզի Օպերատորին բույլատրվի իր ծառայությունների համար այնպիսի սակագներ գանձել, որոնք լիովին կծածկեն բոլոր համապատասխան ծախսերը, ներառյալ Ֆինանսական Համաձայնագրերի եւ Ծրագրի Փաստաթղթերի ներքո Փոխառության սպասարկման ծախսերը,
 - չդադարեցնել, չփոփոխել, չիրաֆարվել կամ չհամաձայնել փոխանցել որեւէ Ֆինանսական համաձայնագիր կամ Ծրագրի Փաստաթուղթը, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ժամանակին ծանուցել Բանկին Օպերատորի հետ որեւէ համաձայնագրի խախտման մասին,
- ձեւակերպել ցանկացած այլ փաստաբուղթ եւ ձեռնարկել ցանկացած այլ գործողություն, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի են Ֆինանսավորման համաձայնագրերը եւ Ծրագրի Փաստաթղթերը գործողության մեջ դնելու համար,
- ներկայացնել եւ երաշխավորել Բանկին Համաձայնագրի կնքման ամսաթվին, Գործողության ամսաթվին, յուրաքանչյուր օգտագործման կիրառման ամսաթվին եւ Փոխառության յուրաքանչյուր Տրամադրման ամսաթվին, որ յուրաքանչյուր Կողմ կատարել է իր բոլոր պարտավորություններն այդ ժամանակ ուժի մեջ գտնվող՝ Օպերատորի հետ համաձայնագրերի ներքո, եւ, որ Հայաստանի Հանրապետությունն ունի իրավասություն եւ հեղինակություն՝ ապահովելու համար եւ կապահովի, որ Օպերատորի կողմից գանձվող սակագները սահմանվեն այնպիսի մակարդակով, որը լիովին ծածկում է Օպերատորի բոլոր համապատասխան ծախսերը, ներառյալ՝ Ֆինանսավորման համաձայնագրերի եւ Ծրագրի Փաստաթղթերի ներքո Փոխառությունների սպասարկման ծախսերը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2013 թվականի հուլիսի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվլուսական բանկի «Երեւանի ջրամատակարարման բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**24 սեպտեմբերի 2013 թվականի
ՍՊԸ-1118**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
73-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

8 հոկտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարույրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող),
Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
իրավական վերլուծության վարչության պետ Ա. Վարդենանյանի, նույն
վարչության մասնագետ Ս. Յովքաշյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության պետ Ս. Յովքաշյանի, իրավական վիրձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, հետազոտությունների եւ վերլուծությունների կենտրոնի փորձագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դոճաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 31.05.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Օրենսգրքի՝ «Պաշտպանի իրավունքները եւ պարտականությունները» վերտառությամբ 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

«1. Պաշտպանը, նապատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը եւ դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, նրա օրինական շահերը պաշտպանելու, կասկածյալին եւ մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի ...»

3) քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին, քրեական հետապնդման մարմնի բույլտվությամբ մասնակցել քրեական հետապնդման մարմնի կողմից իր միջնորդությամբ իրականացվող բոլոր քննչական եւ այլ դատավարական գործողություններին, մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողությանը, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը»:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ընդունվելուց ի վեր օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը փոփոխությունների չի ենթարկվել:

2. Դիմողի կարծիքով՝ օրենսգրքի վիճարկվող նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթին:

Ըստ դիմողի՝ պաշտպանի իրավունքներին վերաբերող կարգավորումը, որի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի քրեական հետապնդման մարմնի **բույլտվությամբ** մասնակցել քրեական հետապնդման մարմնի կողմից իր միջնորդությամբ իրականացվող բոլոր քննչական եւ այլ դատավարական գործողություններին, հանգեցնում է այդ իրավունքի իրականացման մեխանիզմների սահմանափակման այն դեպքում, եթե կասկածյալը կամ մեղադրյալը, ունենալով պաշտպան, քննչական գործողության շրջանակներում չեն պահանջում նրա մասնակցությունը, այլ դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը: Դիմուղը գտնում է, որ քրեական հետապնդման մարմնին նման լիազորություն տրամադրելով՝ գործնականում հնարավոր են անհարկի եւ ոչ իրավաշափ սահմանափակումներ՝ կապված քննչական եւ այլ դատավարական գործողությունների ընթացքում պաշտպանի մասնակցության հետ: Ըստ դիմողի՝ պարզ չէ նաև, թե ինչ նախակ է հետապնդել օրենսդիրը, նախատեսելով քրեական վարույթի առանցքային մասնակցներից մեկի՝ պաշտպանի պարտավորությունները կատարելու համար խոչընդոտ եւ/կամ սահմանափակում, այն է՝ «...քննչական գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը»:

Իր տեսակետը հիմնավորելու համար դիմուղը հարկ է համարում նշել, որ օրենսգրքում բացակայում են հստակ պայմաններ եւ/կամ հիմքեր, որոնց առկայության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է «բույլ չտալ» պաշտպանին մասնակցել պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին:

Օրենսգրքի վիճարկվող դրույթներում «սկսելիս» եզրույթի սեփական մեկնաբանության հիման վրա դիմուղը գտնում է, որ նշված եզրույթն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան իր տառացի մեկնաբանության արդյունքում նշանակում է, որ բոլոր այն դեպքերում, եթե պաշտպանն արդեն սկսած քննչական գործողությանը մասնակցելու միջնորդություն է ներկայացնում, ապա այդպիսի միջնորդությունը՝ համաձայն օրենսգր-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քի վիճարկվող դրույթների, ենթակա է մերժման, քանի որ չի պահպանել օրենսգրքով նախատեսված ժամանակային «սկսելիս» պահանջը:

Հղում կատարելով իրավական որոշակիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Սանդի Թայմսն» ընդդեմ Միացյալ Թագավորության և Մարկսին ընդդեմ Բելգիայի գործերով կայացված վճիռներին եւ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-753 որոշմանը՝ դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթներում «թուլտվությամբ» եւ «սկսելիս» եզրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին եւ տարրներցումների իրական ռիսկ են պարունակում, որի արդյունքում կարող է խախտվել անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը եւ լրջորեն վտանգվել պաշտպանի կողմից քննչական գործողության ժամանակ իր պաշտպանյալին իրավաբանական օգնության տրամադրումը:

3. Պատասխանող կողմը հիմնականում չի առարկում դիմողի փաստարկները:

Անդրադառնալով դիմողի այն փաստարկին, համաձայն որի՝ օրենսգրքում բացակայում են հատակ պայմաններ եւ/կամ հիմքեր, որոնց առկայության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է «թույլ չտալ» պաշտպանին մասնակցել պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին, պատասխանող կողմը նույնպես արձանագրում է, որ օրենքով նշված չեն այն հիմքերը, որոնց առկայության դեպքում միայն կարող է սահմանափակվել քննչական եւ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցության իրավունքը: Այդ կապակցությամբ պատասխանող կողմն արտահայտում է իր ենթադրությունն այն մասին, որ եթե օրենքով չկան պաշտպանի մասնակցությունը բացառող հանգամանքներ, ապա պետք է ապահովվի վերջինիս անարգել մասնակցությունը, եւ կարծիք է հայտնում, որ սահմանափակումները կարող են վերաբերել այնպիսի քննչական գործողություններին, ինչպիսիք են քննումը (հոդված 220), անձնական խուզարկությունը (հոդված 229) եւ փորձաքննությունը (հոդված 248):

Անդրադառնալով դիմողի մյուս փաստարկին՝ կապված իրավական անրոշության հետ, պատասխանող կողմը, չբացառելով պաշտպանի մասնակցության անհրաժեշտությունը ոչ միայն քննչական գործողության հենց սկզբից, այլև քննչական գործողության ընթացքում, նույնպես գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմը կարող է տարրն-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քերցումների տեղիք տալ եւ քննչական ու այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցության սահմանափակման հիմք հանդիսանալ:

ԱՊՀ երկրների քրեական դատավարության օրենսգրքերի ուսումնասիրության արդյունքներով պատասխանող կողմը գտնում է, որ դրանք եւս վկայում են, որ պաշտպանն անարգել մասնակցում է այն քննչական եւ այլ դատավարական գործողություններին, որոնք իրականացվում են իր պաշտպանյալի մասնակցությամբ, կամ երբ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու նախաձեռնությամբ հանդես է եկել ինքը՝ պաշտպանը կամ իր պաշտպանյալը: Միաժամանակ, վկայակոչելով ԱՊՀ մի շարք երկրների քրեական դատավարության օրենսգրքերի կոնկրետ հոդվածներ՝ պատասխանողն արձանագրում է, որ նշված երկրներում այլ քննչական եւ դատավարական գործողություններին պաշտպանը մասնակցում է քրեական հետապնդման մարմնի բույլտվությամբ:

Ամփոփելով՝ պատասխանող կողմը գտնում է, որ օրենսգրքի վիճարկող նորմով նախատեսված իրավակարգավորման պայմաններում, երբ պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին վերջինիս մասնակցությունը սահմանափակվում է քրեական հետապնդման մարմնի բույլտվությամբ, կարող է հիմք հանդիսանալ պաշտպանյալի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի սահմանափակման համար՝ չերաշխավորելով իրավունքների եւ օրինական շահերի լիարժեք պաշտպանություն:

Միաժամանակ, պատասխանող կողմն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի լրամշակված տարբերակը (փաստաթուրային կոդ՝ Կ-084-14.09.2012, 10.06.2013-ՊԻ-010/0), որով առաջարկվող իրավակարգավորմանը կվերացվեն պաշտպանի համար օրենսգրքում առկա սահմանափակումները եւ կերաշխավորվի վերջինիս անարգել մասնակցությունը եւ՝ պաշտպանյալի մասնակցությամբ, եւ՝ պաշտպանի կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին: Ըստ պատասխանող կողմի, նախագծի՝ «Պաշտպանի իրավունքները եւ պարտականությունները» վերտառությամբ 49-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի:

«1. Պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը եւ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պաշտպանելու նրա իրավունքները եւ իրավաչափ շահերը, սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի`...

3) մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող ցանկացած ապացուցողական կամ այլ վարութային գործողության, մասնակցել իր կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող ապացուցողական կամ այլ վարութային գործողությանը, այլ դեպքերում քննիչի առաջարկով մասնակցել ապացուցողական կամ այլ վարութային գործողությանը»:

4. Օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է քրեական գործերով պաշտպանի մասնակցության ռազմավարական եւ մարտավարական նպատակները, այն է՝ պարզել մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը եւ դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները եւ պաշտպանել կասկածյալի եւ մեղադրյալի օրինական շահերը, իրավաբանական օգնություն ցույց տալ նրանց:

Հաշվի առնելով քրեական գործով մինչդատական վարույթում պաշտպանի մասնակցության նպատակը եւ այդ նպատակով պայմանավորված՝ պաշտպանի դերը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմը հարկ է դիտարկել Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի եւ 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի համատեքստում:

5. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանու-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյան արդյունավետ միջոցների իրավունքը չի դիտում որպես սահմանափակման ենթակա իրավունք, իսկ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, ի թիվս այլնի, 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ենթակա է սահմանափակման միայն օրենքով, «... եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»:

Սահմանադրության 18-րդ հոդվածը յուրաքանչյուրին տալիս է, մասնավորապես, պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, որին ուղղակիուն համապատասխանում է պետության պարտականությունն ինչպես օրենսդրական մակարդակում ամրագրել, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայում ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների առկայությունը։ Այսինքն՝ օրենսդրական մակարդակում շատեր է սահմանվեն այնպիսի իրավական կառուցակարգեր, որոնք առաջին հայացքից հանդես են գալիս որպես երաշխիքներ տվյալ իրավական կառուցակարգի իրացման համար, սակայն կարգավորումների մանրամասներում փաստացիորեն իմաստագրկում են կամ սահմանափակում այդ իրավական կառուցակարգերը։

Անդրադանալով Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված, ի թիվս այլնի, պաշտպանի միջոցով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքին եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված իրավունքը վերջին հաշվով ուղղված է դատարանների եւ պետական այլ մարմինների առջև իրավունքի սուրյեկտի օրինական շահերի իրավական պաշտպանությանը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիտարկվող իրավունքը ենթադրում է իրավաբանական օգնության **լիարժեքություն**, ինչը պայմանավորված է պաշտպանի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության իրականացման արդյունավետությամբ՝ **հաշվի առնելով տվյալ իրավունքի՝ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմքերով սահմանափակման հնարավորությունը**։ Ըստ այդմ էլ, Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված՝ դիտարկվող իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ թե՝ օրենսդրական մակարդակում,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թե՝ իրավակիրառ պրակտիկայում երաշխավորել պաշտպանի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության արդյունավետ իրականացումը, իսկ որեւէ խոչընդոտ առաջանալու դեպքում քայլեր ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ:

Միաժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացմանն օրենսդրորեն կարող են առաջադրվել որոշակի պահանջներ կամ նշված իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձեռական պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը, խեղաքյուրեն դրանց եռթյունը կամ վերածվեն իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որեւէ իրավաշափ նպատակ:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի վիճարկվող 3-րդ կետը նախատեսում է քննչական կամ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցության երեք իրավիճակ՝

ա/ **քրեական հետապնդման մարմնի առաջարկով** է պաշտպանը մասնակցում իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին: Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում պաշտպանի մասնակցության այլ դեպքեր ամրագրված լինելու հանգամանքը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտարկվող դեպքը վերաբերում է այն իրավիճակներին, երբ քննչական կամ այլ դատավարական գործողությունը չի իրականացվում պաշտպանի միջնորդությամբ կամ դրա իրականացմանը չի մասնակցում պաշտպանյալը,

բ/ **քրեական հետապնդման մարմնի բույլտվությամբ** է պաշտպանը մասնակցում իր միջնորդությամբ քրեական հետապնդման մարմնի կողմից իրականացվող բոլոր քննչական եւ այլ դատավարական գործողություններին,

գ/ մասնակցում է իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողությանը, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունն սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը:

Վերոնշյալ «ա» ենթակետում նշված իրավակարգավորման առնչու-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյամբ սահմանադրական դատարանն իրավաչափի է համարում օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանի միջնորդությամբ կամ պաշտպանյափի մասնակցությամբ չիրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը քրեական հետապնդման մարմնի առաջարկով պայմանավորելը:

Վերը նշված «բ» ենթակետում ներկայացված դեպքի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացմանն առաջադրել է որոշակի պահանջ՝ **քրեական հետապնդման մարմնի բույլտվությունը**:

Սահմանադրական դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում բացակայում են այն հիմքերը**, որոնց առկայության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չթույլատրել պաշտպանին մասնակցելու պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին, ինչն արձանագրում է նաև սույն գործով պատասխանող կողմը, եւ ինչն իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի սահմանափակման առումով կարող էր իրավաչափի համարվել Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմքերի համատեքստում: Էական է նաև այն, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե քրեական վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ, այլ հենց իր՝ պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը քրեական հետապնդման մարմնի բույլտվությամբ պայմանավորելու վերաբերյալ դրույթը, ի խախտումն Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների, հանդես է գալիս որպես պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող եւ դրա արդյունքում՝ պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթ: Ավելին, այդպիսի սահմանափակումը չի հետապնդում որեւէ իրավաչափի նպատակ:

Վերը նշված «գ» ենթակետում ներկայացված դեպքի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը պետա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կամ մարմինների առջեւ իրավական պաշտպանության իրավունքի իրացմանն առաջադրել է որոշակի պահանջ՝ պաշտպանի մասնակցության վերաբերյալ կասկածյալի կամ մեղադրյալի պահանջի առկայությունը կամ պաշտպանի միջնորդությունը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունն այդպիսի մասնակցության վերաբերյալ կասկածյալի կամ մեղադրյալի պահանջի առկայությամբ պայմանավորելու վերաբերյալ դրույթը եւս, ի խախտումն Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների, հանդես է գալիս որպես պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող եւ դրա արդյունքում՝ պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթ: Ավելին, այդպիսի սահմանափակումը եւս չի հետապնդում որեւէ իրավաչափ նպատակ:

Ինչ վերաբերում է օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողությանը պաշտպանի մասնակցությունը գործողությունն սկսելիս միջնորդության ներկայացմամբ պայմանավորելու վերաբերյալ դրույթին, որը դիմողը բողոքարկել է իրավական որոշակիության տեսանկյունից, սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, անհրաժեշտ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթներում «գործողությունն սկսելիս» բառակապակցությունը գնահատել ոչ թե՝ դրա՝ իրավական որոշակիության պահանջներին համապատասխանելու տեսանկյունից, այլ քննչական կամ այլ դատավարական գործողությանը պաշտպանի մասնակցության ժամանակային սահմանափակման եւ մասնակցության համար պաշտպանի միջնորդության պարտադիր լինելու տեսանկյունից: Այս կապակցությամբ, հիմք ընդունելով սույն կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողությանը պաշտպանի մասնակցության ժամանակային սահմանափակման եւ մասնակցության համար պաշտպանի միջնորդության պարտադիր վերաբերյալ դրույթները:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ըստ եւս, ի խախտումն Սահմանադրության 43-րդ հոդվածի, հանդես են գալիս որպես պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող եւ դրա արդյունքում՝ պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթներ եւ չեն հետապնդում որեւէ իրավաչափ նպատակ:

Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգանանքը, որ օրենսգրքի վիճարկվող նորմի մյուս դրույթների համաձայն՝ կասկածյալը կամ մեղադրյալն օժտված են իրենց մասնակցությամբ իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողությանը ցանկացած ժամանակ պաշտպանի մասնակցությունը պահանջելու իրավունքով, այսինքն՝ պաշտպանի միջնորդությունը մերժվելու դեպքում, անկախ նրանից, թե այդ միջնորդությունը ներկայացվել է քննչական կամ այլ դատավարական գործողությունն սկսելուց առաջ, թե՝ հետո, պաշտպանը դարձյալ կարող է մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությանը, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, սահմանադրական դատարանն օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցության ժամանակային սահմանափակումը եւս համարում է ոչ հիմնավոր, հետեւարար՝ որեւէ իրավաչափ նպատակ չհետապնդող:

Օրենսգրքի վիճարկվող նորմի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր դեպքերում պաշտպանը պետք է իրավունք ունենա մասնակցելու պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին՝ առանց որեւէ միջնորդության ներկայացման, եւ անկախ նրանից, թե այդպիսի մասնակցության վերաբերյալ առկա է կասկածյալի կամ մեղադրյալի պահանջ, թե՝ ոչ:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի լրամշակված տարրերակը (փաստաթղթային կոդ՝ Կ-084-14.09.2012, 10.06.2013-ՊԻ-010/0) եւ ուշագրավ է համարում նշված նախագծի՝ «Պաշտպանի իրավունքները եւ պարտականությունները» վերտառությամբ 49-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված իրավակարգավորումը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7. Խնդրո առարկայի առնչությամբ առանձին երկրների համապատասխան օրենսդրությունների վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքը քննչական կամ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը չի պայմանավորում քրեական հետապնդման մարմնի կամքի դրսեւորմամբ եւ չի նախատեսում քրեական վարույթին պաշտպանի մասնակցության որեւէ ժամանակային սահմանափակում պաշտպանին հնարավորություն տալով օգտվել այն իրավունքներից, ինչ իրավունքներով օժտված է պաշտպանյալը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվլոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի առնչությամբ որոշակի իրավական դիրքորոշումներ արտահայտել է նաև Մարդու իրավունքների եվլոպական դատարանը: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվլոպական դատարանն իր՝ John Murray v. The United Kingdom գործով 1996թ. փետրվարի 8-ին կայացված վճռում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«62. ... Նախաքննության ընթացքում 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի կիրառման առանձնահարկությունները կախված են դարձակառության առանձնահարկություններից եւ գործի հանգամանքներից:

63. ... 6-րդ հոդվածը նորմալ պայմաններում պահանջում է, որպեսզի մեղադրյալին հնարավորություն լրացնի օգլուխությունից ու կարգավորության հենց սկզբնական փուլից: Այնուամենայնիվ, այս իրավունքը, որ հարակ նախադեսված չէ Կոնվենցիայով, կարող է սահմանափակել իրավաչափ նպատակով: Յանկացած գործում հարցն այն է, թե արդյոք ողջ դարձակարության լույսի ներքո սահմանափակումը մեղադրյալին չի զրկել արդար դարձակառությունից»:

Մարդու իրավունքների եվլոպական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով վիճարկվող նորմը՝ համադրելով այն այլ պետություններում համանման իրավահարաբերությունները կարգավորող նորմերի հետ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանցով սահմանված իրավակարգավորումներն իրավունքների ոչ համաշափ սահմանափակման իրական վտանգ են բովանդակում:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ դրանում ամրագրված՝ «**քրեական հելքապնդման մարմնի բույլպուրյամբ**» և «**եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը**» ձեւակերպումների մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթին և 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**8 հոկտեմբերի 2013 թվականի
ՍՊ-1119**



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲԵՐԴՈՒԹԳՈՒՄ

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը 2013թ. **Առյեմքերի 13-16-ը** Սանկտ Պետերբուրգում մասնակցեց Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության ընդունման 20-ամյակին նվիրված միջազգային խորհրդաժողովին:

Խորհրդաժողովում պարուն Հարությունյանը հանդես եկավ «Ժամանակակից սահմանադրականության մարտահրավերները» թեմայով զեկուցումով:

2013թ. **Առյեմքերի 27-29-ին** ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը մասնակցեց Եվրոպայի խորհրդի հովանու ներքո Ստրասբուրգում անցկացվող «Ժողովրդավարության համաշխարհային ֆորումի» աշխատանքներին: Ֆորումի շրջանակներում Գագիկ Հարությունյանը նոյեմբերի 28-ին աշխատանքային հանդիպումներ ունեցավ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի նախագահ պրն Ջիանի Բուրիլիոյի, Գլխավոր քարտուղար պրն Թոմաս Մարկերտի, Գլխավոր քարտուղարի տեղակալ տկն Սիմոնա Գրանատա-Մենգինիի, սահմանադրական արդարադատության բաժնի ղեկավար պրն Շնուտոց Դյուրի հետ: Նշանակած հանդիպումների ընթացքում պրն Հարությունյանի կողմից ներկայացվեց Հայաստանի Հանրապետությունում ընթացող սահմանադրական բարեփոխումների նախապատրաստման գործընթացի ար-

դի վիճակը, սահմանադրական մասնագիտական հանձնաժողովի կողմից այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները, ինչպես նաև քննարկվեցին սահմանադրական բարեփոխումների ոլորտում Վենետիկի հանձնաժողովի հետ համագործակցության հիմնական եղանակները եւ ուղղությունները: Նոյեմբերի 29-ին պրն Գ. Հարությունյանը ելույթով հանդես եկավ «Ժողովրդավարության համաշխարհային ֆորումի» «Անմիջական ժողովրդավարություն» նատաշրջանի մասնակիցների առջեւ՝ անդրադառնալով անմիջական ժողովրդավարության արդյունավետ իրականացման արդի մարտահրավերներին եւ պատասխանեց քննարկման մասնակիցների հարցերին:

2013թ. **դեկտեմբերի 6-7-ը** ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ պրն Գագիկ Հարությունյանը մասնակցեց Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 97-րդ լիազումար նիստի աշխատանքներին, որի օրակարգում ընդունված էին նաև Հայաստանի Հանրապետության առնչվող հարցեր: Լիազումար նիստում, մասնավորապես, քննության առնվեց «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ կապված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում բարոյական վնասի նյութական փոխառություն ինստիտուտի ներդրման հետ: Պրն Գ. Հարությունյանը, անդրադառնալով նշված հարցին, Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2013թ. նոյեմբերի 5-ի ՍԴՌ-1121 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 17-ի 2 մասը, այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտվում որպես վնասի տարատեսակ եւ չի ապահովում բարոյական վնասի փոխառություն հնարավորություն, հակասահմանադրական է ճանաչվել: Գ. Հարությունյանը նաև Հանձնաժողովին տեղյակ պահեց, որ նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2014թ. հոկտեմբերի 1-ը:

Հանձնաժողովի 97-րդ լիազումար նիստի օրակարգում էր ներառված նաև ՀՀ սահմանադրական զարգացումների վերաբերյալ վերջին

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

հաղորդումը: Պրն. Հարությունյանը մասնակիցներին տեղեկացրեց ՀՀ սահմանադրական բարեփոխումների արդի ընթացքի, սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի ծեւավորման, վերջինիս աշխատանքի ծեւաչափի եւ կատարվելիք աշխատանքների մասին: Պրն Գ. Հարությունյանը ներկաներին նաև իրազեկեց Հանձնաժողովի հետ ձեռք բերված պայմանավորվածության՝ վերջինիս անդամների կազմից փորձագիտական խումբ ծեւավորելու վերաբերյալ, որը փորձագիտական աջակցություն պետք է ցուցաբերի Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների իրականացման ընթացքին: Դեկտեմբերի 7-ին, սահմանված օրակարգի համաձայն, անցկացվեցին Հանձնաժողովի դեկավար կազմի՝ Հանձնաժողովի նախագահի, տեղակալների, Քյուրոյի անդամների եւ ներահանձնաժողովների նախագահների եւ տեղակալների ընտրություններ:

Հանձնաժողովի որոշմամբ պրն Գ. Հարությունյանը Վենետիկի Հանձնաժողովի Քյուրոյի անդամ ընտրվեց երկու տարի ժամկետով: Հանձնաժողովի նախագահի պաշտոնում վերընտրվեց պրն Զիանի Բուքիին: Վենետիկի հանձնաժողովը ստեղծվել է 1990թ. որպես սահմանադրական հարցերով Եվրոպայի խորհրդի խորհրդակցական մարմին:

Ներկայում հանձնաժողովին է անդամակցում 59 պետություն, Եվրոպայի խորհրդի բոլոր 47 անդամ-պետությունները եւ 12 այլ երկիր:

ԱՌԱՋԻԿԱ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԸԳՐԵՐ

Փեղովարի 5-ին Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագրի դեկավար թոնաս Մայերին՝ ուղեկցությամբ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչ Արվեդ Գրայերի, GIZ-ի իրավական ծրագրի դեկավար Հայաստանում Վարդան Պողոսյանի եւ GIZ-ի ծրագրի իրավախորհրդատու Հայաստանում Յենս Փորցուցերի:



ՀՀ սահմանադրական դատարանը եւ GIZ-ը համագործակցում են 2008 թվականից: Այդ տարիներին գերմանայից հրավիրված մասնագետների մասնակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանի անդամ-



ների եւ աշխատակազմի համար մի շարք համատեղ սեմինարներ ու բաց քննարկումներ են կազմակերպվել՝ նպաստելով փորձի փոխանակմանը, մտածողության նոր որակների ձեւավորմանը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Զրուցակիցները կարեւորեցին կատարված աշխատանքները, առաջիկա տարիների համար կազմեցին համագործակցության նոր ծրագրեր:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Փեղովարի 6-7-ր տեղի ունենացավ ՀՀ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների աշխատանքային հանդիպումը Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) փորձագետների հետ: Հանդիպման ընթացքում քննարկումներ կազմակերպեցին հայեցակարգային հետեւյալ հիմնախնդիրների շուրջ.



ա) Իրավունքի գերակայության իրացման սահմանադրական մոտեցումները (զեկուցող Գ. Հարությունյան):

բ) Իրավունքների դասակարգումը եւ սահմանափակումները (զեկուցող Գ. Մուրադյան):

գ) Սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի իրացման երաշխիքները (զեկուցող Դ. Հարությունյան):

դ) Ընտրական համակարգի մոդելի ընտրությունը (զեկուցող Հ. Թովմասյան):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- ե) Հանրաքվեի ինստիտուտը (զեկուցող Գ. Դանիելյան):
գ) Սահմանադրության կառուցվածքը (զեկուցող Գ. Հարությունյան):
Վենետիկի հանձնաժողովի փորձագետների հետ հաջորդ աշխատանքային քննարկումը տեղի կունենա սույն թվականի մարտի 20-ին:



ՀՀ ՍԴ մամուլի ծառայություն

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կողեզրայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 05.03.2014 թ.
Դասիչ՝ 77754
Գրաշափը՝ 70x100 1/16
Տպագրանակը՝ 500

*ՀՀ ՍԴ լրեղեկագիրը ՀՀ
բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
ապենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրապարակությունների ցուցակում*

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(71) 2014
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(71) 2014
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Armenie. N 1(71) 2014